

ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՆՈՐԸՆՏԻՐ ԱՌԱՋՆՈՐԴԵ ԵՒ ԱՆՈՐ ԸՆԿԵՐԱԿՅՈՂ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԱՅՅԵՆՅՈՒՆ ՀԱՆԳՈՒՅԵԱԼ ՆԱԽԱԳԱՀ ՀԱՖԵՉ ԱԼ ՍԱՍՏԻ ԴԱՄԲԱՐԱՆԸ

Երեքշաբթի, 18 Յունիս 2019-ի առաւօտուն, Բերիոյ Յայոց Թեմի Նորընտիր Առաջնորդ Գերշ. Տէր Մասիս Սրբ. Եպս. Չօպուեան եւ անոր ընկերակցող պատուիրակուիները այցելեցին հանգուցեալ Նախագահ Յաֆեչ ալ Ասատի դամբարանը, Զրտահա: Առաջնորդ Սրբազան Յայրը ծաղկեպսակ գետեղեց դամբարանին դիմաց, որպէս յարգանքի եւ երախտագիտութեան արտայայտութիւն:



Այնուհետեւ Նախագահին շիրիմին դիմաց տեղի ունեցաւ հոգեհանգստեան արարողութիւն. այցելուները աղօթք բարձրացուցին առ Ամենաբարին Աստուած՝ խաղաղութիւն հայցելով Սուրիական Յայրենիքին եւ բարի երթ՝ անոր վերականգնումի աշխատանքներուն:

Աւարտին Առաջնորդ Սրբազան Յայրը իր տպաւորութիւնն ու մաղթանքը արձանագրեց դամբարանի յուշամատենին մէջ:

Յիշենք, որ սրբազան հօր ընկերակցող պատուիրակութեան մաս կը կազմէին. Սուրիոյ խորհրդարանի երեսփոխան Ժիրայր Ռիսեան, Յալէպի Նահանգային Խորհուրդի անդամ Մարիա Գաբրիէլեան, Մեծի Տանն Կի-



լիկիոյ Կաթողիկոսութեան Կեդր. Վարչութեան Զաղաքական Ժողովի անդամ Յրաչ Յակոբեան, Ազգ. Երեսփոխանական Ժողովի ատենապետ Սումպուլ Սումպուլեան, Երեսփոխանական Ժողովի անդամներ Կարօ Իւզպաշեան եւ Յարութ Յայրապետեան, Ազգ. Վարչութեան անդամ Պետրոս Յովհաննէսեան, Կրօնական Ժողովի անդամ Տէր Չարեհ Զահանայ Շաքարեան, Լաթաքիոյ հոգեւոր հովիւ Տէր Վազգէն Զինյ. Զեօշկերեան, Լաթաքիայէն եւ Զեսապէն ազգայիններ՝ Աւօ Կարպուշեան, Գեորգ Գաթրճեան, Սողոմոն Լևոնեան եւ Վահագն Ղազարեան:

ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ. «ՄԵՐ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԿՐՕՆԱԿԱՆ ՊԱՐՏԱՌՈՒԹԻՒՆՆ Ե ՊԱՇՏՊԱՆԵԼ ՍՈՒՐԻՈՅ ԿԱՅՈՒՆՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԳԵՐԻՇՆԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՄԱՍՆԱԿՅՈՒ ԱՆՈՐ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԻ ԱՃՆԱՏԱՆՔՆԵՐՈՒՆ»

Երեքշաբթի, 18 Յունիսի միջօրէին, Բերիոյ Յայոց Թեմի Նորընտիր Առաջնորդը եւ անոր ընկերակցող պատուիրակուիները այցելեցին Լաթաքիոյ Նահանգապետ Իպրահիմ Խընտըր Սալէմին:

Հանդիպումին ընթացքին Առաջնորդ Սրբազան Յայրը յայտնեց, որ հայ ժողովուրդը Սուրիան կը համարէ յարութեան հայրենիք: Յայրենիք, որ Օսմանեան Կայսրութեան կազմակերպած Յայոց Յեղասպանութենէն ետք, շատ բան տուաւ հայ ժողովուրդին ու սա-



տար կանգնեցաւ անոր գարթօնքին: «Սուրիահայութեան բարոյական եւ կրօնական պարտաւորութիւնն է պաշտպանել Սուրիոյ գերիշխանութիւնն ու կայունութիւնը: Կ'աղօթենք առ Բարձրեայն Աստուած, որ պահպանէ Սուրիան եւ անոր բանակը, որոնք համայն աշխարհին եւ մարդկութեան փոխարէն կը պայքարին ահաբեկչութեան դէմ», ըսաւ սրբազան հայրը, անելցնելով, որ Սուրիոյ մէջ թէ դուրս ապրող հայերը հաւատարմօրէն

Տար. 19 15 ➤

ՍՈՒՐԻԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՄՈՒՖԹԻ՝ ԸՆՅԻՆ ԱՀՄԱՏ ՊԱՏՐԵՏՏԻՆ ՀԱՍՍՈՒՆ ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԱՅՅԵՆՅՈՒՆ

Երկուշաբթի, 17 Յունիս 2019-ի միջօրէին, Սուրիական Արաբական Հանրապետութեան Մուֆթի՝ Շէյխ Ահմատ Պատրըտտին Ռասսուն պաշտօնական այցելութիւն մը տուաւ Բերիոյ Յայոց Թեմի Նորընտիր Առաջնորդին՝ Գերշ. Տէր Մասիս Սրբ. Եպս. Չօպուեանի:

Ազգ. Առաջնորդարանի դահլիճէն Ներս տեղի ունեցած հանդիպումին ընթացքին, Մուֆթին ջերմապէս շնորհաւորեց Առաջնորդ Սրբազան Յայրը Բերիոյ Յայոց Թեմի Առաջնորդ ընտրուելուն առիթով եւ յաջողութեան ու արեւշատութեան իր մաղթանքները յայտնելով վստահեցուց, որ հոգեւոր առաջնորդները միասնաբար, գործակցութեան ոգիով սատար պիտի հանդիսանան Սուրիական Յայրենիքի վերականգնումի աշխատանքներուն:

Իր կարգին, Առաջնորդ Սրբազան Յայրը իր ուրախութիւնը յայտնեց Սուրիական Հանրապետութեան Մուֆթիին այցելութեան



առիթով, շեշտելով, որ հպարտ է Սուրիական Յայրենիքին, Սուրիոյ ժողովուրդին ու հայ համայնքին ծառայութեան նուիրուելուն համար:

Մտերմիկ մթնոլորտի մէջ ընթացած հանդիպումին Ներկայ էին նաեւ Մուֆթիի գլխաւոր քարտուղար Պասել Ղըս Նասրալլա, իսլամ կրօնաւորներ, ինչպէս նաեւ Ազգ. Երեսփոխանական Ժողովի անդամ Կարօ Իւզպաշեան, Ազգ. Վարչութեան ատենապետ Տարօն Մակարեան, Ազգ. Վարչութեան եւ Կրօնական Ժողովի Ներկայացուցիչներ:



Խմբագրական

ՊԱՔՈՒՆ ՄՇԱԿՈՅԹԻ ՊԱՇՏՊԱՆ

ԻՆՏԵՍՔՕ-ի տարեկան 43-րդ համաժողովը պիտի գումարուի Պաքուի մեջ 30 Յունիսին 10 Յուլիս 2019-ին: ԻՆՏԵՍՔՕ-ն, որ կոչուած է մշակութային կոթողներ, կառոյցներ, այլ խօսքով՝ մշակութային ժառանգութիւն պահպանելու, իր համաժողովը գումարելով Ատրպէյճանի մեջ, ոչ միայն ինքզինք կը հակասէ, այլեւ աչք կը խփէ տարիներ առաջ իր իսկ պահպանած արձանագրութեանց, որոնց մեջ բառացիօրէն կը վկայագրէր, որ ազերի զինուորներ պետական հրահրումով եւ ծրագրումով քանդած ու Արաքս գետ թափած են Նախիջեւանի հայկական հարիւրաւոր խաչքարերը:

Ատրպէյճանի մեջ նման ժողովի մը գումարումը այդ երկիրը կը դասէ մշակութային ժառանգութիւններու պահպանման սատարող պետութիւններու շարքին:

Սա ոչ միայն անարդարութիւն է, այլ արհամարհանք մշակութային ժառանգութիւններու նկատմամբ եւ թողութեան շնորհում պատմական վկայութիւնները ոչնչացնող պետութիւններու: Երեւոյթ մը, որ առաւել բարբարոս կրնայ դարձնել Ատրպէյճանի նման պետութիւն մը՝ հայկական կոթողներն ու մշակութային հետքերը ոչնչացնելու եւ մշակոյթ հասկացութիւնը արհամարհելու իմաստով: Մշակութասէր ըլլալը լոկ քարիւղով հարուստ ըլլալ չի նշանակեր: Մշակութասէր ըլլալը քաղաքակրթութեան կնիքը կրել կը նշանակէ առաւելաբար: Իսկ Ատրպէյճան վերջին տարիներու իր վարքագիծով ապացուցեց, որ զուրկ է նման կնիքին շնորհած փոխըմբռնումի եւ գիտակցութեան յատկութենէն եւ կը խօսի միայն քարիւղի, կաշառքի ու խաւեարային դիւանագիտութեան լեզուով:

Արդարեւ, եթէ հայկական կողմը պետական համապատասխան մարմիններուն կամ համահայկական մշակութային կազմակերպութիւններուն միջոցով ձայն չբարձրացնէ ու լուռ հետեւի Պաքուի մեջ իրականացող այս համաժողովի ընթացքին, ինք եւս թողութիւն շնորհած պիտի ըլլայ բարբարոսներուն:

ԻՆՏԵՍՔՕ-ն վերջին տարիներուն, ցանկագրումներէ բացի, ոչ մէկ լուրջ քայլի դիմած է իսլամական թէ քրիստոնէական մշակութային ժառանգութեանց պահպանման իմաստով: Սուրիոյ մեջ ակնատեսը եղանք պատմական յուշարձաններու, դամբարաններու, քաղաքներու քանդումին... եւ լուռ էր ԻՆՏԵՍՔՕ-ն՝ հակառակ իր կոչումին: Զաղաքական եւ նիւթական շահերու իրաւունքը կը խօսէր փաստօրէն:

Եթէ լռութիւնը մէկ յանցանք է, բարբարոսը մեծարելը՝ երկրորդ եւ անելի մեծ յանցանք:

Ժողովի գումարման թուականը մօտեցած է արդէն: Կարելի չէ՞ օտար լեզուներով հաղորդագրութիւններ ու տեսանիւթեր տարածել, ժողովի իսլամ թէ քրիստոնէայ մասնակիցներուն նամակներ յղել, որպէսզի դատապարտուին այլոց մշակոյթը ատելով քանդողները՝ իրենց իսկ տան մեջ:

Սա որքան պարզ, նոյնքան կարեւոր քայլ կրնայ ըլլալ, բարբարոսական նման քայլերէ զերծ պահելու Ատրպէյճանի եւ Թուրքիոյ նման երկիրներ:

Վերջին տասնամեակներուն քրիստոնէական թէ իսլամական մշակութային ժառանգութեանց դիտումնաւոր, նոյնիսկ պատկերասփռող քանդումները ԻՆՏԵՍՔՕ-ն արհամարհելու կոչուած յստակ քայլեր էին: Ինչո՞ւ ուրեմն այս կազմակերպութիւնը տերը չի կանգնիր իր կոչումին եւ սկզբունքային գործելաոճով իսկական պահպանող չի դառնար մշակութային ժառանգութեանց:

Հայկական լրատուամիջոցներէն, մշակութային միութիւններէն, պետական կառոյցներէն ու պատմագետներէն լուրջ քայլեր կ'ակնկալուին այս ուղղութեամբ: Սա ոչ միայն հայկական մտահոգութիւն է, այլ համաշխարհային քաղաքակրթութեան սպառնացող վտանգ, որ լուրջ պատասխանատուութեան պետք է հրաւիրէ առնչուող կողմերը:


«Գ.»

ՍՈՒՐԻԱԿԱՆ

ՄԱՍՆՈՅ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Այս շաբաթ, սուրիական մամուլը անդրադարձաւ տեղական եւ միջազգային գետնի վրայ տեղի ունեցած կարեւոր եւ հետաքրքրական դէպքերու:

Երկուշաբթի, 17 Յունիս 2019-ին, ՍԱՆԱ-ի թղթակիցը յայտնեց, որ Փեքիկի մեջ, Չինաստանի փոխնախագահ Ռուանկ Չի Շան Սուրիոյ արտաքին գործոց նախարար Ռալիտ Մուալլէմի ընդունելութեան ընթացքին շեշտեց, որ Փեքիկ պիտի շարունակէ աջակցիլ Սուրիոյ եւ իր կարելին ի գործ պիտի դնէ զոյգ երկիրներու յարաբերութիւնները զարգացնելու եւ ամրապնդելու այլազան ոլորտներ՝ ներառեալ տնտեսականը: Այնուհետեւ Մուալլէմ շնորհակալութիւն յայտնեց Չինաստանի քաղաքական եւ սկզբունքային գորակցութեան, ինչպէս նաեւ Սուրիոյ ժողովուրդին ցուցաբերած մարդասիրական օգնութեան, սատար հանդիսանալով պատերազմի 9-ամեայ տարիներուն ընթացքին Սուրիոյ ժողովուրդի պայքարին: Չի Շան շեշտեց, որ Չինաստանի համար անվիճելի են Սուրիոյ ինքնիշխանութիւնը, խաղաղութիւնն ու տարածքային ամբողջականութիւնը, անէցնելով, որ Չինաստան կտրականապէս կը մերժէ Սուրիոյ ներքին հարցերուն արտաքին միջամտութիւնը: Հանդիպումին ներկայ գտնուեցան Սուրիոյ արտաքին գործոց փոխնախարար Քալալ Մքտատ, Փեքիկի մեջ Սուրիոյ դեսպան Իմատ Մուսթաֆա, Սուրիոյ Արտաքին գործոց Նախարարութեան վարչակազմի տնօրէն Մուհամմէտ Օմրանի եւ Մուալլէմի ընկերակցող պատուիրակութիւնը: Չինաստանի կողմէն ներկայ գտնուեցան Չինաստանի արտաքին գործոց նախարարի օգնական Չի Շիաու Տոնկ եւ Չինաստանի նախագահական գրասենեակէն խորհրդատուներ ու բարձրաստիճան պատասխանատուներ:



Կիրակի, 16 Յունիս 2019-ին, ՍԱՆԱ-ի թղթակիցը հաղորդեց, որ Հալեպի արեւմտեան կան թուման եւ Ռաշիտին շրջանին մեջ կայք հաստատած «Ճապիաթ ալ Նուսրա» զինեալ ահաբեկչական խմբաւորումները բազմաթիւ հրթիռներ արձակեցին հարաւային Ուրտտեի գիւղին ուղղութեամբ: Արձանագրուեցան 12 զոհ, 15 վիրաւոր եւ նիւթական վնասներ:



Իսկ Երկուշաբթի, 17 Յունիս 2019-ին, սուրիական պատկերասփռող կայանները հաղորդեցին, որ Գամիշլիի Քատտուր Պեկ թաղամասին մեջ ակնուած ինքնաշարժ մը պայթած է: Պայթումին հետեւանքով արձանագրուած են զոհեր եւ վիրաւորներ: Այլ առումով, սուրիական «Ալ Ուստա» թերթը յայտնեց, որ Երկուշաբթի, 17 Յունիս 2019-ին, Հասիչէի հիւսիսային ճառուտիէ գաւառին պատկանող Ապիհա եւ Շապաք գիւղերուն մեջ բռնկած հրդեհին պատճառով վնասուած է գիւղատնտեսական հողատարածքներու անելի քան 500 տոնումը: Միւս կողմէ, զինեալ ահաբեկչական խմբաւորումներ բազմաթիւ հրթիռներ արձակած են Համայի հիւսիսային արուարձանէն Շէյխ Հատիտ գիւղին ուղղութեամբ, որուն հետեւանքով հողատարածքներ բռնկած են, ցանքը փճացած եւ նիւթական ահաւոր վնասներ արձանագրուած են: Աղբիւրին համաձայն, սուրիական բանակը հրթիռակոծած է ահաբեկիչներու կեդրոնները: Այս առիթով սուրիական «Շամ Թայմ» կայքէջին մեջ կը յիշուի, որ Սուրիոյ հիւսիսային եւ արեւելեան շրջաններու գիւղատնտեսական ոլորտին կրած վնասները կը հասնին շուրջ 19 միլիարդ ս.ս.ի (3.300.000 ԱՄՆ. Տոլար): Հրդեհներուն հետեւանքով վնասուած հողատարածքները միջեւ 16 Յունիս 2019 կը համարուէր 40860 հազար հեկտարի: 350 հեկտար Տեր Չօրի, 34600 հեկտար Ճազիրէի, 2450 հեկտար Երապիտի, 1850 Թապայի, 1500 հեկտար Ռաքքայի եւ 110 հեկտար Մունայունի մեջ: Այլ առիթով սուրիական «Տամ Փրես» կայքէջէն կ'իմանանք, որ Սեւտական Արաբիոյ գաղտնի սպասարկութեան նախկին նախագահ Թուրքի Ֆայսալ, ամբաստանած է Քաթարը՝ 1995-էն ի վեր «Քաիտե»-ին հետ գործակցելուն եւ Սուրիոյ մեջ «Ճապիաթ ալ Նուսրա» զինեալ ահաբեկչական խմբաւորման աջակից հանդիսանալուն համար:



Լուրեր Հայաշխարհին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՋ ՍՓԻՒՔԱԶԱՅԵՐՈՒ ԽՈՐՀՐԴԱՏՈՒԹՅԱՆ ԳՐԱՏԵՆՏԱԿԸ ԿԵԱՆՔԻ ԿՈՉՈՒՄԸ

ՀՀ Գրասենյակի Գերագույն Մարմինը նախաձեռնությամբ կեանքի կոչում է Հայաստանի մեջ հաստատուած սփիւռքահայերու խորհրդատուութեան գրասենյակը:

Գրասենյակի գործառնութիւնը է խորհրդատուական օգնութիւն տրամադրել հայրենիքի մէջ հաստատուած մեր հայրենակիցներուն, ճշգրիտ ձեւով ուղղորդել գիրքերը դիմագրաւուած հարցերու լուծման համար:

Գրասենյակը խորհրդատուութիւն կը տրամադրէ ՀՀ քաղաքացիութիւն ձեռք բերելու, կեցութեան, վարորդական իրաւունք ստանալու, գրանցումի, հայկական բանակին մէջ ծառայելու, նաեւ կրթական, առողջապահական, ապահովագրութեան, աշխատանքային, շարժական եւ անշարժ գոյքի գրանցման եւ այլ հարցերու համար:

Հարցերու լուծումին համար գրասենյակը նաեւ պատրաստ է դիմելու պատկան մարմիններու, կառոյցներու եւ պաշտօնատար անձերու:

Սփիւռքահայերու խորհրդատուութեան գրասենյակի հասցէն է՝ Հանրապետութեան 30, «Սիմոն Վրացեան» կեդրոն, 1-ին յարկ, 16-րդ սենեակ: Դիմատետրի էջ՝ Հայրենադարձ/ Repat Հեռախօսահամար՝ 094-94-519-119

Էլ. հասցէ՝ hayrenatarts@gmail.com

Գրասենյակը կ'աշխատի ամէն օր՝ Երեւանի ժամանակով 11:00-15:00, բացի Շաբաթ եւ Կիրակի օրերէն:



ԿԱՐԵՒՐԸ ՇԵՏԱԳԱՅ ԴԱՅՈՒՄՔԵՆ Է

8 Մայիս 2019-ին ընդունուեցաւ «Կառավարութեան կառուցուածքի եւ գործունեութեան մասին» օրէնքի փոփոխութիւններու նախագիծը, որով Սփիւռքի Նախարարութիւնը կը լուծարուէր՝ փոխարէնը վարչապետի աշխատակազմին մէջ կազմաւորուելով Սփիւռքի Հարցերու Յանձնակատարի Գրասենյակ:



14 Յունիսին Նիկոլ Փաշինեանի կողմէն յանձնակատարի պաշտօնին նշանակուեցաւ ԱՄՆ Զաւիթֆորնիոյ նահանգի Կլենտէյլ քաղաքային խորհուրդի նախկին անդամ եւ քաղաքապետ, քաղաքագետ, իրաւաբան Չարեհ Սինանեան:

Այս առնչութեամբ «Ա1+»-ը գրուեց ՀՀ Բիւրոյի անդամ, Հայ Դատի եւ քաղաքական հարցերու գրասենյակի պատասխանատու Կիրո Մանոյեանի հետ:

Մանոյեան անդրադառնալով յանձնակատարի նշանակման հարցին ըսաւ. «Պէտք է ըստ, որ բաւականին դժուար պատասխանատուութիւն է՝ նախ հաշուի առնելով, որ ընդհանրապէս նոր կը ձեւաւորուին գրասենյակն ու գործառնութիւնը»:

Անկախ անկէ, թէ ով կը նշանակուէր այդ պաշտօնին, ըստ ՀՀ գործիչին, սա մեծ պատասխանատուութիւն պահանջող պաշտօն է, որովհետեւ կոչուած է Հայաստան-Սփիւռք յարաբերութիւններու բարելաման:

Քաղաքական գործիչին համաձայն, Սինանեան մշտապէս մասնակցած է Հայ Դատի յանձնախումբերու աշխատանքներուն, բայց վերջին շրջանին ձեռնարկած էր որոշ քայլերու, որոնք քիչ մը անհասկալի կը թուէին. «Ցատկապէս՝ վիրահայրութեան կամ ջաւախահայրութեան հարցերու հետ կապուած», ըսաւ ան:

Երբ Մանոյեանի հարց տրուեցաւ, թէ ինչ անհասկնալի քայլերու մասին է խօսքը, ան ըսաւ, որ Սինանեան Վրաստանի մէջ ուղղակի ՀՀ-ի դեկավարներուն դէմ խօսած է:

Անդրադառնալով այն հարցին, թէ մտահոգութիւններ կա՞ն Իրանի եւ Ռուսաստանի հայ համայնքներուն մէջ Սինանեանի ԱՄՆ-ի քաղաքացի ըլլալուն առնչութեամբ, քաղաքական գործիչը ըսաւ, որ պարզապէս քաղաքացիութիւնը պէտք է, որ կանխորոշէ անոր հետագայ գործերը եւ փաստերը ցոյց պիտի տան արդիւնքը:

«Ինչն ալ այդ մասին մտահոգութիւն արտայայտած է, հետեւաբար կրնայ այդ ուղղութեամբ գործուն, դրական աշխատանք տանիլ, յուսանք», ըսաւ Մանոյեան՝ անելցնելով, որ եթէ յանձնակատարը Ռուսաստանի քաղաքացի ըլլար, Ամերիկայի հայ համայնքը կրնար մտահոգութիւն յայտնել, սակայն ամէն պարագայի հետագայ իր պահուածքը կարելի է:

Իսկ պատասխանելով այն հարցումին, թէ այս նշանակումը ինչպէ՞ս կ'ընկալուի ընդհանուր ՀՀ-ի կառոյցներուն մէջ, Մանոյեան շեշտեց, թէ այնպէս է, որ «Աշխարհի մեր բոլոր կառոյցներով ընտարկած ենք Սինանեանի

Շար. էջ 14

Չարեհ Սինանեան ՆՁԱՆԿՈՒԹՅԱՒ ՍՓԻՒՐԻ ԳՈՐԾԵՐՈՒ ԳԻՒՄՈՐ ՅԱՆՁՆԱԿԱՏԱՐ

Վարչապետ Նիկոլ Փաշինեանի որոշումով, Կլենտէյլի քաղաքապետական խորհուրդի նախկին անդամ Չարեհ Սինանեան նշանակուեցաւ Սփիւռքի գործերու գլխաւոր յանձնակատար:

Վարչապետը Ուրբաթ, 14 Յունիսին ընդունեց Սինանեանը իր գրասենյակին մէջ:

«Ես որոշում ստորագրած եմ ձեզ Սփիւռքի հարցերու գլխաւոր յանձնակատար նշանակելու մասին եւ ուրախ եմ, որ պէտք է աշխատանքի անցնիք Հայաստան: Անցեալ տարի Հայաստանի մէջ տեղի ունեցած իրադարձութիւնները ցոյց տուին, որ հսկայական փոփոխութիւններ եղած են ոչ միայն Հայաստանի, այլեւ Սփիւռքի մէջ: Միանշանակ կրնամ ըսել, որ Սփիւռքը անցեալ տարի լիարժէքօրէն մասնակից էր Հայաստանի մէջ տեղի ունեցած ոչ բռնի, թաւշեայ, ժողովրդական յեղափոխութեան: Պէտք է արձանագրենք նաեւ, որ իմ քանի մը այցելութիւններու արդիւնքով եկայ այն եզրակացութեան, որ մենք Սփիւռքի հետ վարորդ քաղաքականութիւնը պէտք է փոխենք եւ զայն դարձնենք անելի արդիւնաւետ, որոն հիմնական նպատակադրումը պէտք է ըլլայ Սփիւռքի առաւել մեծ ներգրաւուածութիւնը Հայաստանի, Հայաստանի տնտեսական կեանքին, Հայաստանի հանրային կեանքին, Հայաստանի քաղաքական կեանքին, Արցախին եւ ընդհանրապէս, մեր օրակարգերու իրագործման աշխատանքներուն», ըսաւ վարչապետը:



Չարեհ Սինանեան շնորհակալութիւն յայտնեց վարչապետին վստահութեան համար եւ ըսաւ. «Պարտաւոր կը զգամ եւ մեծ պատիւ կը համարեմ այս աշխատանքը ստանձնելը, նաեւ մեծ պարտականութիւն, քանի որ, ինչպէս դուք նշեցիք, մեր հայրենիքի՝ Հայաստանի Հանրապետութեան, Արցախի եւ Սփիւռքի յարաբերութիւնները հսկայական ներուժ ունին: Մեր խաղաղ, թաւշեայ, ոչ բռնի յեղափոխութեան արդիւնքով բացուած են Հայաստանի եւ Սփիւռքի միջեւ իրական, իմաստալից, խոր համագործակցութեան դռները, որուն արդիւնքները կրնան պարզապէս անընթացաբերելիօրէն լաւ ըլլալ եւ Հայաստանի, եւ Սփիւռքի համար»:

Սփիւռքը Հայաստանի համար կը ներկայանայ որպէս մի պատրաստի ներուժ, գոր պէտք է օգտագործել պարզ, լաւագոյն իմաստով՝ ի շահ հայրենիքի: Հայաստանի Հանրապետութիւնն ալ ինչ-որչափով Սփիւռքի յարատեւման, ուժեղացման երաշխաւորն է: Այնտեղ ալ շատ խնդիրներ կան եւ ես չեմ կասկածիր, որ այսօրուան Հայաստանի Հանրապետութիւնը պատրաստ է նեցուկ կանգնելու իր հայրենակիցներուն Սփիւռքի մէջ, ինչպէս որ Սփիւռքի մեր հայրենակիցներն են պատրաստ աջակցելու Հայաստանի Հանրապետութեան, Արցախին: Շնորհակալութիւն վստահութեան համար, պիտի ընեմ ամէն ինչ, որպէսզի այդ վստահութիւնը արդարացնեն»:

Հանդիպման ընթացքին գրուցակիցները քննարկեցին Սփիւռքի Գործերու Գլխաւոր Յանձնակատարի Գրասենյակի յետագայ գործունեութեան վերաբերող հարցեր:

Սինանեանի նշանակումը շնորհաւորեց Արեւմտեան Ամերիկայի Հայ Դատի յանձնախումբի ատենապետ Նորա Յովսէփեան:

«Յանձնախումբին կողմէ կ'ուզեմ շնորհաւորել մեր սիրելի ընկեր Չարեհ Սինանեանը՝ Հայաստանի մէջ պաշտօն ստանձնելուն առթիւ: Այն օրերէն երբ մենք միասին կը ծառայէինք Արեւմտեան Ամերիկայի Հայ Դատի յանձնախումբի Տնօրէններու խորհուրդին մէջ, այն օրերէն երբ մենք (Հայ Դատի շրջանակը) մեր կարելիութիւնները գործաշարժի ենթակցեցինք իր՝ քաղաքապետական խորհուրդի անդամ ընտրուելու պայքարը յաջող աւարտի հասցնելու համար, մինչեւ վերջերս տակաւին օրէնսդիրներու հետ Հայաստան կատարած մեր այցելութիւնը, մինչեւ այսօր մենք Չարեհին հետ ունինք ջերմ բարեկամական յարաբերութիւն: Սփիւռքը եւ հայրենիքը խորապէս ճանաչող Չարեհը իւրայատուկ եւ հիմնաւոր պատկերացումով պիտի վարէ իր գործը եւ մենք վստահ ենք, որ ան իր աշխատանքին միջոցաւ պիտի շարունակէ իր գիտութիւնը եւ կարողութիւնը ծառայեցնել Հայ Դատին: Ցաշողութիւն կը մաղթենք իրեն եւ կը խոստանանք պահել իրեն հետ մեր սերտ գործակցութիւնը եւ աջակցիլ Սփիւռքի եւ հայրենիքի միջեւ կամուրջները ամրացնելու իր ծրագիրներուն», յայտնեց Նորա Յովսէփեան:

Չարեհ Սինանեան ծնած է Երեւան: Կրթութիւնը ստացած է նախ Երեւանի, ապա ԱՄՆ-ի Պրոքայեքթ քաղաքին մէջ: 1997-ին քաղաքագիտութեան եւ պատմութեան Պսակաւոր աստիճան ստացած է UCLA-էն, այնուհետեւ աւարտած է USC-ի իրաւագիտութեան դպրոցը: 2001-էն գբաղած է փաստաբանական գործունեութեամբ: 2014-2015 գբաղեցուցած է Կլենտէյլի քաղաքապետի պաշտօնը: Ան վերջերս իրաժարեցաւ Կլենտէյլի քաղաքապետական խորհուրդին: Չարեհ Սինանեան ամուսնացած է, ունի չորս երեխայ:

ՎԱՅԱՆ ԽՈՐԵՆԻ (ՏԵՐ ԳԵՈՐԳԵԱՆ 1884-1920)



Միհրան Զիրսոնյան

Նախապես անդրադարձած էի գաղափարաբանական հարցերու վերաբերող Երուանդ Ֆրանկեանի պատմափիլիսոփայական տեսութիւններուն, որոնք քննադատաբար կը հակադրուէին Մարքսի նիւթապաշտութեան (materialism) եւ կը յանգէին համադրական մոնիզմի՝ հիմնաւորելով այն թեզը, որ պատմութեան անկիւն առաջ կը մղուի առարկայական (տնտեսական) պայմաններու եւ ենթակայական (մարդգաղափար) գործոններու համարժէք փոխներգործութեամբ, եւ կ'աւելցնէի, թէ այդ թեզը կազմած է հիմքը ԶՅԴ-ի ընկերակարական ըմբռնումին:

Նոյն նիւթին առնչուած եւ իլրացում անոր, մտածեցի երկրորդ յօդուածով մը հպանցիկ անդրադառնալ Երուանդ Ֆրանկեանի ժամանակակից ու դաշնակցական եռանդուն գործիչ Վահան Խորենի տեսութեան, որ բուն քննադատութեան ենթակայ դարձած է իր ատենին համայնակարական դիրքերէ՝ Ստ. Շահումեանի, տխրահռչակ Սարգիս Կասեանի, Նաեւ աւելի վերջ ուրիշներու կողմէ:

Կրկնելու գնով անմիջապէս յայտնեմ, որ նախորդ դարու կրպակակալներու գաղափարաբանական այսօրինակ վեճերը, որոնք ի պաշտպանութիւն ահագին մեջան, իսկ համայնակարական գաղափարաբանութիւնը տարածելու-գործնականացնելու համար գետի նման արիւն հոսած է գանազան երկիրներու, որոնք շարքին Նաեւ Զայաստանի մէջ՝ պատճառ դառնալով մեր նորակերտ ազգային պետականութեան ու անկախութեան կորուստին: Մարքսի վարդապետութեան՝ այսինքն անդասակարգ հասարակութիւն մը յառաջացնելու նպատակին համար ամբողջ 70 տարի այդ երկիրներուն պարտադրուեցաւ մարքսեան միատեսակ դաստիարակութիւն, յաջորդական սերունդներ վախով ու սարսափով ապրեցան, ահաւոր հալածանքներու, բռնութիւններու, խոշտանգումներու ենթարկուեցան, տարիներով Սիպերիոյ ու այլ քարտէսային մէջ տառապեցան եւ այլն, բայց ի գուր: Առաջին տարիներուն իր գաղափարաբանութեամբ գանգուածներ հրապուրել է անոնց միջոցով իշխանութիւն դառնալէ ետք համայնակարութիւնը վերածուեցաւ ամբողջատիրական բռնակալութեան, ապա ամեհի հսկայի մը նման ինքնիր վրայ փլու ու ջնջացաւ: Զիմա, ինչպէս Չիւստանն է, երկու-երեք երկիրներ մնացած են միայն, որոնք անուանապէս իբրեւ թէ «համայնա-

վար», բայց շատ հեռու են մարքսիզմէ: Անոնցը անագ ատ-ամբողջատիրական վարչակարգեր են, բայց տընտեսութիւնը ազատական է, դրամագլուխի վրայ հիմնուած... Չտարածուիմ ու վերադառնամ նիւթիս...:

Գրասեղանիս վրայ չունիմ Վահան Խորենի տեսութիւններուն վերաբերող որեւէ գիրք, յօդուած կամ այլ գրութիւններ: Այս ուղղութեամբ համացանցի վրայ որոնումներս ալ ապարդիւն մնացին: Զոն միայն կենսագրական շատ ժլատ տեղեկութիւններ գտայ Խորենի մասին: Որով, այս անդրադարձիս հիմքը կը կազմեն յիշողութիւնս եւ շուրջ քառասուն տարի առաջ ընթերցումներս հապճեպ քաղուած խառնիխուռն, գրեթէ անընթանելի դարձած նոթերս: Խորենի ծնած է Սիւեանի գիւղերէն մէկուն մէջ: Էջմիածնի Գեորգեան ճեմարանը աւարտելէ, գերմանական համալսարաններու մէջ ուսումը կատարելագործել է պատմափիլիսոփայութեան գիտական դոկտորայի տիտղոսին արժանանալէ ետք ընդգրկուած է ուսուցչական ասպարէզի Թիֆլիս, միաժամանակ հոն խմբագրելով «Աշխատաւոր» թերթը: 1919-ին Երեւան է, ուր կը խմբագրէ «Յայաստանի Աշխատաւոր»ը: Անկախ Զայաստանի խորհրդարանական երկրորդ գումարման կ'ընտրուի պատգամաւոր (երեսփոխան) եւ կը գլխաւորէ խորհրդարանի դաշնակցական պատգամաւորներու խմբակցութիւնը՝ յաճախ վիճարկելով Խատիսեանի կառավարութեան գործունէութիւնը: Զամայնակար հայերու հակապետական խլրտումներու օրերուն՝ 1920 Օգոստոսին կը ղըրկուի իր ծննդավայրը Չանգեզ ուր՝ քաղաքացիական-եղբայրասպան հաւանական կռիւները կանխելու առաքելութեամբ, բայց հոն դաւադրաբար կը ձերբակալուի համայնակարներու կողմէ Գորիսի բանտին մէջ դաժանօրէն կը սպանուի 13 դաշնակցականներու հետ, 1920-ին, 36 տարեկան հասակին:

Քաղաքական ու գաղափարաբանական ինդիւիդուալ նուիրեալ Վահան Խորենի գործիչը, պայքարի առաջապահ դիրքերէ՝ իր պատմափիլիսոփայական տեսութեամբ շատ բուն հակադրուած է Մարքսի նիւթապաշտ վարդապետութեան եւ անիկա որակած՝ «առարկայականութեան եւ ցնդաբանութեան գուգադրութիւն»: Ըստ Խորենի, «ցնդաբանութիւնը» կը կայանայ «տիպիկտիք» աշխատակարգի (մեթոտի) վրայ Մարքսի ձեւաւորած մտածելակերպին մէջ, որ սխալ ելա-

կետէ մը սկսելով կը յանգի անիրականանալի, ցնորային եզրակացութեան մը: Մարքս կը հաւատայ, թէ հի՛ն, նախապատմական շատ հի՛ն դարերուն մարդկութիւնը եղած է անդասակարգ հասարակութիւն մը, ուր սեփականութիւն չկար: Սա Մարքսի տիպիկտիքայի մէջ՝ «դրութիւն»ն է, որու դիմաց ստեղծուած է սեփականատէր դասակարգ (հակադրութիւն)ը եւ այս երկուքի բախումը յառաջ բերած է տնտեսական նոր կացութիւն մը՝ (համադրութիւն)ը, որ ժամանակի թաւալումին



հետ կը դառնայ «դրութիւն», ինչ որ կ'ունենայ իր հակադրութիւնը, վերածուելու համար համադրութեան: Եւ այսպէս, իրարու հակադրուող դասակարգային պայքարներով ու «համադրութիւն»ներով առաջ կ'ընթանայ պատմութիւնը, մինչեւ որ յանգի սկզբնակէտին՝ անդասակարգ հասարակութեան, ուր չկան ամէն չարիքի արմատ սեփականատիրութիւն, դրամագլուխ եւ այլն: Ըննադատելով տիպիկտիքը Խորենին կ'ըսէ, թէ այդ մեթոտը ի վիճակի չէ նոյնիսկ յստակացնելու պահը (Ե՞րբ) եւ ձեւը (ինչպէ՞ս) տեղի պիտի ունենայ դասակարգային պայքարի կամ յեղափոխութեան վերջնագոյն փուլը, որ պիտի յանգի (եղեր) ցնորային անդասակարգ հասարակութեան...:

Խորենին հիմնականօրէն կը մերժէ դասակարգային պայքարի տեսութիւնը: Ըստ իրեն, Մարդկային կեանքի մէջ անդասակարգ հասարակութիւն ոչ եղած է անցեալին, ոչ ալ կրնայ ըլլալ ապագային: Ան կ'ըսէ, թէ մարդ էակի ձեւաւորման առաջին օրերէն, հասարակական կեանքի բոլոր ձեւերուն ու արտայայտութեանց մէջ, մարդկային բնութիւնը օժտուած եղած է երկու տեսակ յատկանիշներով՝ ազատութեան ձգտումով եւ իշխանատէնչութեամբ: Իշխողներու եւ իշխողներու, այսինքն՝ շահագործողներու եւ շահագործողներու պայքարներով է, որ պատմութիւնը կը թաւալի: Այս կը նշանակէ, թէ Խորենին պատմութիւնը շարժող ուժերը կը դնէ հոգեբանական հարթութեան վրայ եւ ոչ թէ նիւթին կամ տնտե-

սութեան: Կը հաստատէ, թէ ընկերակարութիւնը ծնունդ առած է դրամագլուխէն, առանց որուն հնարաւոր չէ որեւէ բարգաւաճում, յառաջընթաց, զարգացում: Դրամագլուխը ոչնչացնելով, այսինքն ոչինչէն, ինչպէ՞ս կարելի է ընկերակարութիւն կառուցել:

«Նոր»ը առաջ կու գայ ոչ թէ «հին»ի ոչնչացումով, այլ անոր ունեւորման բարձրանալով գայն կը կերպարանափոխէ: Կ'ըսէ, թէ չարիքին ետեւէն դրամագլուխը չէ, այլ անոր գործածութեան եղանակն է:

Ընկերակարութեան յաղթանակը դրամագլուխի անեացման մէջ չէ, ինչ որ, ըստ իրեն, անհնար է արդէն: Ընկերակարութեան յաղթանակը կը կայանայ այն պարագային, երբ մարդկութեան մշակութային ու քաղաքակրթական վերելքը նուաճէ այնպիսի աստիճան, ուր դրամագլուխի բարիքները արդարօրէն պիտի բաշխուին՝ ի սպաս մարդու եւ ընկերութեան կեանքի բարելաւումին եւ այլն:

Խորենին ընկերակարական յեղափոխութիւնը կը պատկերացնէ. «բովանդակութեամբ՝ հասարակական դրամատիրութիւն, ձեւով ու կազմակերպութեամբ՝ ընկերակարական»:

Խորենի այս մտեցումը կը նշանակէ, թէ անորով դաստիարակութեամբ մէկ կողմէ շահագործողներու ազատութեան ձգտումը, անոնց արդարութեան ու իրաւունքի գիտակցութիւնը եւ պայքարելու ոգին պետք է զօրացնել, իսկ միւս կողմէ՝ հասարակական ազնուութեան, մարդկայնութեան զգայնութիւնը պետք է մշակել ու զարգացնել՝ միաժամանակ դրամագլուխին վրայ ի գործ դնելով օրէնսդրական սահմանափակումներ, ճնշումներ, սեղմումներ...:

Ահաւասիկ դաշնակցական մտքի ու գրչի երկու մեծեր՝ Ե. Ֆրանկեան եւ Վահան Խորենի, որոնք քննադատաբար կը հակադրուէին Մարքսի նիւթապաշտութեան եւ իրենց տեսութեամբ ընկերակարութեան յաղթանակին համար հիմնական կը սեպէին գաղափարի ուժը եւ ազգային շրջագիծը նոյնիսկ այն օրերուն, երբ մտքերու վրայ կը վեհապետէր միջազգային ընկերակարութեան Մարքսի տեսլականը:

Իրենցմէ առաջ, ԶՅԴ-ի հիմնադիրներէն՝ համոզումով ամենէն Մարքսիտը համարուած Ռոստոմ առիթով մը մօտաւորապէս յայտարարած էր արդէն, թէ՝ «... Մենք ընկերակարական չենք եղած այս ու այն տեսութեան կամ վարդապետութեան ծառայելու համար: Մենք ընկերակարական եղած ենք հաւատաւորով, որ անիկա լաւագոյն միջավայրը կը ստեղծէ հայութեան զարգացման, մեզի կը ներշնչէ պայքարի կամք՝ ազգի ազատագրումին եւ ազգային մեր ձգտումներուն հասնելու համար... »:

ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՆՈՐԱՏԻՐ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ԱՆԴՐԱՆԻԿ ԴԱՏԱՐԱԳԸ

Բերիոյ Հայոց Թեմի նորընտիր Առաջնորդ՝ Գերաշնորհ Ս. Մասիս Սրբ. Եպս. Չօպուեանի Հալէպ Ժամանումը անտարբեր արձագանգ ունեցաւ Թեմի տարածքին: Հալէպ քաղաքը բարի գալուստի շքեղ ըն-



դունելութեան պերճախօս թարգմանը հանդիսացաւ:

Արդարեւ, Կիրակի, 16 Յունիս 2019-ին, Սրբոց Քառասնից Մանկանց Մայր եկեղեցւոյ մէջ, Սուրբ եւ Անմահ պատարագ մատուցեց եւ քարոզեց Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Ս. Մասիս Սրբ. Եպս. Չօպուեանը: Ներկայ էին Ազգային, Երեսփոխանական, Կրօնական եւ Վարչութեան ժողովի ներկայացուցիչներ, ՀՀ Հալէպի գլխավոր հիւպատոսը, ինչպէս նաեւ հաւատացեալներու հոծ բազմութիւն:



Եկեղեցւոյ դպրաց դասին եւ «Շողակաթ» երգչախումբին կատարողութեամբ ներդաշնակ երգեցողութիւնը ունէր մեղեդիաբարբառ առ-



գանութիւն: Զրիստոսասեր ներկայութիւնը երկիւղած հետեւողութեամբ մասնակից կը դառնար հոգեպարար արարողութեան: Ուրախալի շարժառիթը անգամ մը եւս կը հաստատեր ժողովուրդին անքակտելի կապուածութիւնը հայ եկեղեցւոյ նկատմամբ: Վերօժուած Ս. Քառասնից Մանկանց եկեղեցին միւռնւելի առաքելութեամբ, յարթական երթի հոգեխօս պատկերը կը պարզեր ամենուն աչքերուն առջեւ:

Առաջնորդ Սրբազան Հայրը իր քարոզին որպէս բնաբան ընտրեց Սաղմոս 121-ի աղօթաբոյր խօսքերը. «Աչքերս դէպի լեռները պիտի վեր-

նեմ, ուրկէ իմ օգնութիւնս պիտի գայ: Իմ օգնութիւնս Տիրոջ մէն է, որ երկինքը ու երկիրը ստեղծեց» (Սղ 121.1-2):

Մասիս Եպս. Չօպուեան նախ անդրադարձաւ մարտահրաւրներով շրջապատուող, նեղութեանց մատնուող եւ բազմաբնոյթ դժուարութեանց մէջ գտնուող հաւատքի մարդուն՝ սաղմոսասացին յուսադրիչ արտայայտութեան մասին: Դիտել տալով, որ Աստուծոյ ապաւինողը՝ լաւատեսութեամբ՝ բարի դիտաւորութեամբ եւ դրական տրամադրութեամբ կը շարժի, այլ խօսքով՝ բարին կ'ակնկալէ եւ յոյսով Աստուծոյ խոստումներուն կատարումը կը սպասէ: Սրբազան Հայրը ըսաւ. «Գոհութիւն կը յայտնենք Աստուծոյ, որուն Ներգործող զօրութեան շնորհիւ հալէպահայը տակաւին կը գոյատեւէ, անորոշուելի կամքով եւ հաստատուն հաւատքով կառչած կը մնայ սուրիական հայրենիքին: Բերիոյ Հայոց Թեմը պատմական նշանակութիւն ունի: Թեմը իր բոլոր կառուցներով գոյապայքար կը մղէ եւ կը շարունակէ ապրիլ, հակառակ պատերազմին վատ հետեւանքներուն:

Լիայոյս ենք, որ ծառայութեան ոգիով եւ սիրոյ սկզբունքով միասնաբար կը կերտենք Նոր հանգրուան մը, բարօրութեամբ եւ պայծառութեամբ յատկանշուած: Այս ծանր աշխատանքը իր բարի նպատակին կը ծառայէ համագործակցութեամբ: Ուստի, մեզ մէ իւրաքանչիւրը կանչուած է իր բաժինը բերելու, որպէսզի վերականգնուի բոլոր ծրագիրները դառնան իրագործելի»: Սրբազան Հայրը խրախուսիչ պատգամին ընդմէջէն հոգեւոր, բարոյական եւ ազգային արժեքներուն պահպանն ու տարածիչը ըլլալ թելադրեց:

Պատարագի ավարտին տեղի ունեցաւ հոգեհանգստեան պաշտօն: Ապա թափօրը «Տեր Կեցո Դու Չհայս» մաղթերգի երգեցողութեամբ ուղղուեցաւ եկեղեցւոյ շրջափակ, որմէ ետք հնչեց Կիլիկիոյ Կաթողիկոսութեան նուիրուած յատուկ օրհներգը:

Առաջնորդ Սրբազան Հայր «Պահպանիչ» աղօթքով հաւատացեալները խաղաղութեամբ արձակուեցան:

Արեւշատութիւն եւ օրհնաբեր ծառայութիւն կը մաղթենք նորընտիր Առաջնորդ Սրբազան Հայր:

Թող Աստուած իր մարդասիրական խնամքին ներքեւ պահէ Հայ Առաքելական Ս. եկեղեցին:


Խորեն Բնկ. Պերթիզեան

ՀՅԴ ԲԻՐՈՅԻ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅԻՉԻՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ ՀՀ ՀԱԼԷՊԻ ԳԼՒՍԱՌՈՐ ՀԻՒՊԱՏՈՍՈՒԹԻՒՆԵՒ ՀՀ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ ԿԵՂՈՆ

ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տեր Խաչատուրեան Երեքշաբթի 4 Յունիս 2019-ին, Բերիոյ Հայոց Թեմի Ազգ. Երեսփոխանական Ժողովի անդամներ Կարօ Իւզպաշեանի ու Յարութի Հայրապետեանի եւ Ռատիօ Երազի տնօրէն Ռուբէն Գեորգեանի ընկերակցութեամբ, այցելեց Հալէպի ՀՀ Գլխավոր հիւպատոս Արմէն Սարգսեանին: Հանդիպումին ներկայ էին նաեւ Հիւպատոսութեան խորհրդական Վարդան Յովհաննիսեան եւ մարդասիրական առաքելութեամբ Հալէպի մէջ ծառայող խումբի պետ Արկատի Տօնոյեան:

Մտաւոր մէկ ժամ տեւող հանդիպումի ընթացքին քննարկուեցան հալէպահայութիւնը յուզող մտահոգութիւններ եւ սուրիահայութեան վերականգնումի գծով սկսած աշխատանքը շարունակելու հեռանկարները:

Գլխավոր Հիւպատոսը իր գոհունակութիւնն ու շնորհակալութիւնը յայտնեց այցելութեան համար: Խաչատուրեան իր կարգին բարձր գնահատեց Սուրիոյ տագնապի ընթացքին, ՀՀ Դեսպանութեան եւ Հալէպի Գլխավոր Հիւպատոսութեան գործուն ներկայութիւնն ու ծառայութիւնը մեր ժողովուրդին:



Հանդիպումէն ետք, Յակոբ Տեր Խաչատուրեան իրեն ընկերակցող պատուիրակութեան, հիւպատոսին ու Արկատի Տօնոյեանին ընկերակցութեամբ, այցելեց Հալէպի մէջ՝ ՀՀ մարդասիրական առաքելութեամբ ծառայող խումբի կեդրոնը: Խումբի

պատասխանատու Արկատի Տօնոյեան լուսաբանութիւններ տուաւ անոր մարդասիրական առաքելութեան ու ծառայութեան ոլորտներու շուրջ, նշելով, որ թշկանական անձնակազմը իր գործը ծաւալած է Հալէպի բազմաթիւ արուարձաններու մէջ ապրող արաբ ժողովուրդին, Հալէպի պետ. Համալսարանէն, ինչպէս նաեւ ՍՕՒ-ի ընկերաթշկական կեդրոնէն ներս: Յակոբ Տեր Խաչատուրեան մեծապէս ողջունեց ՀՀ Կառավարութեան որոշումը եւ Սուրիոյ տագնապալի պայմաններուն մէջ այս երկրի նկատմամբ ցուցաբերուած վերաբերմունքը, զայն համարելով հայ ազգի նկարագրային յատկութիւնը:



ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Բերիոյ Հայոց Թեմի Կալուածոց Հոգաբարձութիւնը, Կալուածոց գրասենեակին համար կարիքը ունի երկու պաշտօնէտայի:

- Թեկնածուները պարտին ունենալ
 - Ուսումնարանի վկայական կամ նուազագոյնը՝ Պաքալորիա:
 - Տարիքը ըլլայ (25-40)-ի միջեւ
 - Պետական հիմնարկներուն հետ գործակցութեան կարողութիւն:
 - Հայերէն եւ արաբերէն լեզուի տիրապետում (գրել-կարդալ):
- Պայմանները ամբողջացնողները կրնան դիմել Կալուածոց գրասենեակ:

Բերիոյ Հայոց Թեմի Կալուածոց Հոգաբարձութիւն

ԿԱՌՉԱԾ ՄԱՆՔ ՄԵՐ
ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ
ՆՊԱՏԱԿՆԵՐՈՒՆ



Խաչիկ Ծափինեան

Հայ Դատի Ե պահանջատիրութեան ի խնդիր մղուող հետեւողական պայքարի, ինչպէս նաեւ Արցախի ազատագրութեան ամրագրման և վերակախացած Հայաստանի պետականութեան հզօրացման ու բարգաւաճման հարթութեան վրայ, հայութիւնը այսօր կը դիմագրաւէ պատմական շրջադարձային և ճակատագրական փուլ մը: Այնուամենայնիւ՝ շատեր այսօր թիրմացաբար չեն վարանիր մեր ժողովուրդի հայաստանեան, արցախեան և սփիւռքեան թելերուն ռազմավարութեանց և առաջնային շահերուն միջեւ հակադրութիւններ տեսնելու, զանոնք համարելով հայոց երկրի յառաջդիմութիւնն ու զարթօնը սանձահարող ազդակներ: Նման հակասութեանց մասին մտածողներու համաձայն, օրինակ, Թուրքիոյ հետ սահմանային բացումը լոկ Հայաստանի Հանրապետութեան շահերուն կը ծառայէ, Հայկական Տեղասպանութեան ճանաչումը՝ սոսկ սփիւռքահայութեան շահերուն, իսկ Արցախի անկախութիւնը՝ առանձնապէս արցախահայութեան շահերուն...:



Անշուշտ հայութեան այսօրինակ բաժանումը կարելի է ընդունիլ միայն պայմանականօրէն, զուտ աշխարհագրական հիմունքով եւ ոչ ռազմավարութիւններու կամ շահերու հակադրութեամբ: Որովհետեւ՝ Տեղասպանութեան ճանաչումը եւ Թուրքիոյ հետ սահմանի բացումը բոլորովին տարբեր տրամաբանութեամբ քննուող խնդիրներ են: Անոնցմէ առաջինը աղերսուած է հայ ժողովուրդի ողջակիզումին, պատմութեան ընթացքին անոր նկատմամբ գործադրուած անարդարութեան եւ մեր ազգային արժանապատուութեան, իսկ երկրորդը՝ քաղաքականութեան, սահմանակից երկու իրաւահաւասար երկիրներու յարաբերութեան: Անկանխակալ եւ կառուցողական մօտեցումով պիտի նկատենք օրինակ՝ որ եւրոպական ընտանիքէն ներս լիարժէք համարկումը ոչ միայն օգտակար պիտի ըլլայ Հայաստանի Հանրապետութեան եւ Հայկական Սփիւռքին, այլ նաեւ Արցախի անկախ Հանրապետութեան: Եւրոպայի հետ համակողմանի համարկման արդիւնքով մեր հայրենիքը պիտի նուաճէ ժողովրդավարական եւ պետական համակարգի հաստատման աւելի բարձր որակ, պիտի կարողանայ աւելի լայն տարողութեամբ օժանդակել արժուաբոյն Արցախին եւ պաշտպանել ծով գոհողութիւններու գնով կենսագործուած անոր անկախութիւնը,

մանաւանդ՝ շատ աւելի բեղմնաւոր եւ հեզասահ ընթացք պիտի հաղորդուի հայրենիք-Սփիւռք առնչութիւններուն՝ կրթական, մշակութային, տնտեսական, քաղաքական եւ այլ բազում ասպարեզներու մէջ...: Գաղթաշխարհը, իր կարգին, մեծ հնարաւորութիւններ ձեռք պիտի բերէ, ինչ որ պիտի նպաստէ տարբեր երկիրներու մէջ Հայաստանի շահերը աւելի հեշտ ու արդիւնարար կերպով հետապնդելու:

Այս բոլորը, անտարակոյս, կարելի կը դառնան հայութեան միասնութեամբ, մեր ժողովուրդը համա-

հայկական նպատակներու շուրջ համախմբելով: Իսկ այս նպատակներուն գլխաւորները կը հանդիսանան Հայաստանի Հանրապետութեան հզօրացումը, համաշխարհային թատերաբեմի վրայ անոր հեղինակութեան բարձրացումն ու դիրքերու ամրակայումը, ինչպէս նաեւ՝ աշխարհի տարբեր երկիրներէն ներդրումային հոսքերը աշխուժացնելու հեռանկարով մեր հայրենի գործարարական-ներդրումային մրջնալուրտի եւ օրէնքներու բարեփոխումը...: Տակաւին՝ Արցախեան անկախութեան ամրացման ու տեւականացման գորակցիլը, հայրենիք-Սփիւռք կապերու առաւել սերտացումն ու ամրակայումը՝ յօգուտ զոյգ կողմերու հզօրացման եւ բարգաւաճման, պահանջատիրական պայքարին եւ Հայկական Տեղասպանութեան ճանաչման գործընթացին սատարելը... եւ այլն:

Ուրեմն՝ պէտք է ընդմիջտ հրաժարիլ մեր ժողովուրդը պառակտող, անոր տարբեր հատուածներուն միջեւ սեպ խրող, հոս ու հոն յայտնուող ամենադոյզն անհամաձայնութիւններն անգամ սրող, խորացնող, շահարկող... մանաւանդ՝ հասարակութիւնը սեւ ու սպիտակ թշնամական ճամբարներու բաժնող եպտելի ու դատապարտելի վերաբերմունքէն, ազգակործան քաղաքականութենէն, որոնցմէ կրնան օգտուիլ միայն մեզ դարանակալ հետապնդող, հայոց դարաւոր, նենգ եւ անհաշտ թշնամիները՝ թուրքն ու ազերին:

Մեր ժողովուրդի վստահոյն ձգտումներն ու հեռագոյն տեսլականները հասանելի կը դառնան միայն հանուր հայութեան նիւթա-

Թուրքիոյ նուրջ

Թուրքիոյ մէջ Իճիստի կողմնակիցութեան դասգաստութիւնը դասադարձութիւն է ՀԱՅ ԿՆՈՉ ԴԱՆԱԿԱՆԱՐՈՒՄԸ

«Էրմենիհապեր».- Թուրքիոյ մէջ իշխող «Արդարութիւն եւ Չարագում» կուսակցութեան պատգամաւոր Մուսթաֆա Եներօղլու անդադարձած է Սամաթիոյ մէջ յարձակման ենթարկուած հայ ընտանիքին Թուրքիան լքելու որոշումին:



Թուրք պատգամաւորը Twitter-ի վրայ կատարած գրառումով քննադատած է իշխանամետ լրատուամիջոցները, որոնք չեն լուսաբանած Իսթանպուլի մէջ ապրող հայ ընտանիքին բնակարան ներխուժելու եւ տանտիրուհին դաժնակահարելու դէպքը: Յայտնենք, որ այդ դէպքին մասին հրապարակումներ կատարած էին միայն «Ակօս» թերթը եւ ընդդիմադիր քանի մը լրատուամիջոցներ:

Գրառման մէջ ի մասնաւորի ըսուած է. «Նախ սպառնացած են Իսթանպուլի հայ ընտանիքին, որմէ ետք ներխուժած են անոր տունը եւ կնոջ դանակահարած են: Ընտանիքը որոշած է Թուրքիան լքել: Խստօրէն կը դատապարտեն այս դաժանութիւնը: Ռասիստները, որոնք այս բոլորին հեղինակն են, Թուրքիոյ ամենամեծ թշնամիներն են: Յոյս ունիմ, որ մեղաւորները շուտով կը ձերբակալուին»:

Թուրք պաշտօնեան իր աջակցութիւնը յայտնած է հայ ընտանիքին: Անոր համաձայն, Եւրոպայի մէջ իսլամներու դէմ ռասիստական յարձակումներուն եւ Թուրքիոյ մէջ կրօնական եւ ազգային պատկանելիութեան տէր անձանց նկատմամբ իրականացուող յարձակումներուն միջեւ ոչ մէկ տարբերութիւն կայ:

Յիշեցնենք, որ 31 Մայիսին Իսթանպուլի Սամաթիա թաղամասին մէջ անյայտ անձինք ներխուժած էին Արփիկէի բնակարանը եւ դանակահարած անոր: Այնուհետեւ դիմած էին փախուստի՝ գոռալով. «Սա տակաւին սկիզբն է»: Դէպքին առնչութեամբ հետաքննութիւն սկսած էր:

Չետագային հայ ընտանիքը յայտնած էր, որ պիտի լքէ Թուրքիան եւ Հայաստան վերադառնայ:

բարոյական, հոգեմտաւոր ու գաղափարական ողջ ուժերու եւ կարելիութիւններու համատեղումով ու համակարգումով, միանգամայն միասնութեան եւ համագործակցութեան բարձրագոյն որակի ձեռքբերումով, ուր իւրաքանչիւր անհատ հայ կ'ունենայ արժանի իր տեղը, կշիռը, կը ճանչնայ իրեն վերապահուած դերն ու ազգի թէ հաւաքականութեան նկատմամբ իր պարտաւորութիւնները:

Ներկայիս աւելի քան Եական հրամայական կը սեպուի, համախումբ հայութեան ներուժը առաւելազոյն օգտագործելով, նորօրեայ համաշխարհային քաղաքականութեան մէջ Հայաստանը իր կրաւորական վիճակէն դուրս բերելու եւ գայն կարողունակ, աշխոյժ եւ ներգործուն ներկայութիւն դարձնելը:

Հայրենի պետութեան շուրջ համախմբուելու մեր ժողովուրդի գըլխաւոր դժուարութիւնը պէտք է որոնել մեր մասնատուածութեան եւ հատուածական մտածողութեան մէջ: Հարկ է այլեւս ձերբազատիլ գաղափարական առանց հիմնաւոր ենթահողի ամբողջ տասնամեակներ շարունակուած մեր այլատեսակ հակադրութիւններէն:

Քաղաքական տարբեր ուժեր եւ կազմակերպութիւններ աներկբայօրէն ազատ են դառնալու տարաբնոյթ գաղափարաբանութիւններ, ինչպէս՝ ընկերվարական, ազատական, ժողովրդավարական, ազգային, համաշխարհային եւ այլն: Անոնց միջեւ աշխարհահայեացքներու եւ ուղղուածութիւններու տարբերութիւնները, քաղաքակիրթ անհամա-

ձայնութիւնները բնական են, անխուսափելի եւ նոյնիսկ՝ օգտակար: Սակայն որոշ կողմերու քաղաքական ծրագրերը առաջ մղելու եւ քաջալերելու հետամտութեամբ հորիզոնային Միութեան եւ այլ երկիրներու գաղտնի ծառայութիւններու կողմէ անցեալին ստեղծուած արհեստական հակամարտութիւնները, երբեմն նոյնիսկ սարքովի առնականութիւններն ու արիւնահեղութիւնները, այսօր բացարձակապէս մերժելի են եւ դատապարտելի:


Մեր հակադրութիւններն ու գաղափարական տարբերութիւնները պէտք է ջանաք վերածել հարստութեան, հզօրանքի, կենսունակութեան աղբիւրի:

Անհրաժեշտ է յարգել խղճի, հաւատքի, դաւանանքի, մտածումի, խօսքի եւ այլ ազատութեանց տարբեր կողմերու եւ խմբաւորումներու անկապտելի իրաւունքը: Այսուհանդերձ հարկ է, որ բոլորը կառչած մնան համագային ընդհանրական վստահ նպատակներու, նուիրական եւ մնայուն արժէքներու, ապա աշխատին միասնաբար եւ համատեղ ջանքերով նուիրագործել զանոնք, անկախ առգոյ տարակարծութիւններէն, մօտեցումներու գանազանութենէն:

Հայութիւնը կը յաջողի թեւակոխել յառաջդիմութեան եւ զարգացման նոր փուլ, նուաճումներու եւ իրագործումներու նոր ժամանակաշրջան՝ միայն ու միայն հայրենասուէր վարքով, համագային համընդհանուր տեսլականով եւ ժողովրդանուէր համախումբ աշխատանքով:

ԱՌԱՍՊԵԼՆԵՐՈՒ ՃԱՄԲԱՆԵՐՈՎ

-1-



Յուշիկ Նազարեան

Առաջին Կայան


Յանախն երբ մեզ շրջապատող զարգացած աշխարհը կը գնենք, անոր մեջ կը յայտնաբերենք զարգացման անյարիր երեւոյթներ: Կարծէք մարդկութիւնը ճարտարարուեստի ու գիտութեան բնագաւառներուն մեջ կ'արձանագրէ յառաջխաղացք՝ ի վնաս մարդկային արժէքներուն եւ հոգեկան անդորրին: Այսօրուան աշխարհը կը տառապի բազմաթիւ ախտերէ, որոնք տակաւին կէտ հարիրամեակ առաջ գոյութիւն չունին, կամ եթէ կային, համատարած ու մտահոգիչ երեւոյթներ չէին: Ըստ Ամերիկեան Յոգեբանական Միութեան (American Psychological Association) տուեալներուն, Ամերիկայի մէջ այսօրուան երկրորդականի ուսանող պատանիներուն ճնշուածութեան (stress) աստիճանը կը հաւասարի 1950-ական թուականներու հոգեբուժարաններու հիւանդներու ճնշուածութեան աստիճանին հետ: Ա՛լ պիտի չխօսինք չափաւաստներուն մասին, որոնք, իրենց պատանութեան ապրած ու շարունակուող ընկերային ճնշումներուն կողքին, կը դիմագրաւեն շարունակական սղած, անգործութիւն ու մութ ապագայ:

Կապոյտ երկինքին տակ, սակայն, սորոքին չկայ: Այն օրէն, երբ մարդկութիւնը որոշեց լքել անտառն ու քարայրի բնակութիւնը եւ ապրիլ կազմակերպուած համայնքներու մէջ, ուր կը տիրեն ոչ թէ բնութեան օրէնքները, այլ ընկերային համակարգը, անանդութիւնները, սովորութիւններն ու մարդուն ստեղծած օրէնքները, այդ օրէն ի վեր կը շարունակենք դիմագրաւել նոյն դժուարութիւնները. միայն շապիկն է տարբեր: Դարերու կուտակուած փորձառութիւն ունի մարդկութիւնը, իսկ մարդկային զարգացման ամենէն հիմնական ազդակներէն մին կը համարուի փորձառութեան բաւարար ու գրաւոր փոխանցումը անհատ-անհատ, սերունդէ-սերունդ: Անսահման իմաստութիւն կայ մեր նախահայրերէն մեզի փոխանցուած, սակայն անոր հասնելու մեր ճամբաները հետզհետ սկսած են մաշիլ ու 21-րդ դարու մարդը սկսած է կորսնցնել իր քարտեզը՝ հոգեւոր արժէքները: «Յոգեւոր արժէքներ» արտայայտութիւնը հոս դուրս է, ոչ միայն գուտ կրօնական առումով, այլ իր մէջ կ'ընդգրկէ նիւթականէն անդին ամեն բան, որ կը բնորոշէ մեր մարդկութիւնը:

Ուրեմն, ո՞ր են մեր նախահայրերուն փորձառութիւնները: Ինչպէ՞ս կրնանք օգտուիլ անոնցմէ:

Հանճարեղ գիտնական Ալպերթ Այնշթայն ըսած է. «Եթէ կ'ուզէք որ ձեր գաւազները խելացի ըլլան՝ անոնց հեքիաթ կարդացէ՛ք, իսկ եթէ կ'ուզէք որ հանճարներ ըլլան՝ շատ հեքիաթ կարդացէ՛ք»: Առաջին հայեացքով, այս խօսքին բացատրութիւնը շատ պարզ է՝ հեքիաթը երեխաներուն երեւակայութեան հորիզոնները կ'ընդլայնէ եւ կ'օժտէ գանոնք արժէքային կայուն համակարգով: Միայն այդքանով կարելի՞ է բաւարարուիլ: Եկէք օրինակ առնենք աշխարհի ամենէն տարածուած ու սիրուած հեքիաթներէն մէկը՝ «Կարմիր Գլխարկիկ»ը: Իրականութեան մէջ, ոչ այնքան ալ յորդ երեւակայութեամբ ստեղծուած է ան: Ամենէն հետաքրքրական բաժինը թերեւս Կարմիր Գլխարկիկին ու Մեծ Սօր տարագով ծպտուած Գայլին միջեւ երկխօսութիւնն է՝ ընդամենը երեք հարցում-պատասխանով: Իսկ բարոյապէս ի՞նչ կը թելադրէ սերունդներու նախասիրած այս հեքիաթը. մայրիկին խօսքը մտիկ ընել, օտարներու հետ չխօսիլ, անտառէն ծաղիկ չհաւաքել... Պատմութիւն մը մարդոց կողմէ սիրուած ըլլալու համար, պէտք է անոր միտք բանին խտրուէ ընկալողին հոգին: Կը կարծէ՞ք, թէ վերոյիշեալ թելադրանքները կը խտրուեն երեխային հոգին, որ ծնած է ծնողներէն անջատուելու եւ աշխարհը հետախուզելու գօրաւոր ձգտումներով: Հեքիաթը ստեղծուած է այդ ձգտումները սահմանափակելու եւ երեխան ընկերային համակարգին մէջ ապահով ձեւով ընդգրկելու միտումով: Այդ պարագային ան պիտի ըլլար ծնողներու՝ եւ ոչ թէ երեխաներու նախասիրածը: Առաւել հետաքրքրական հարցում մը. ինչպէ՞ս կ'աւարտի այս հեքիաթը: Վստահ չէք, որովհետեւ տարբեր աւարտներ լսած էք: Ուրեմն, ի՞նչ է այս հեքիաթին գաղտնիքը:

Անելի լաւ հասկնալու համար, եկէք պահ մը մտածենք, թէ իսկապէս ի՞նչ է հեքիաթ կոչուած երեւոյթը: Հեքիաթը խորքին մէջ առասպել մըն է, որ շատ պատմուելուն պատճառով կորսնցուցած է դիւցազնական բնոյթը եւ վերածուած ժամանցի միջոցի: Անոր հերոսները աստուածներ ու կիսաս-



Շար.՝ 12 14

ԵԱԳՈՒՊԻՆԵՐՈՒՆ ԿԵԱՆՔԸ «ԱՐԱԲԱԿԱՆ ԳԱՐՈՒՆ»ԷՆ ԱՌԱՋ




Արամ Ա. Երեցեան

Բժիշկ Արամ Երեցեանի «Եագուպիէն Երեկ եւ Այսօր» գիրքը կարդացած եմ քանի մը անգամ եւ ամէն անգամ նոր բան մը գտած եմ անոր մէջ, ծանօթացած մեր գիւղի սովորութիւններուն եւ անանդութիւններուն: Այդ գիրքին էջերէն ծանօթացած եմ մեր ուղղամիտ նախահայրերու որդեգրած միջոցներուն՝ համերաշխ եւ խաղաղ ապրելու շրջակայ գիւղերու մահմետական բնակիչներուն հետ: Այո՛, Եագուպիէի եւ Եագուպիեցիներուն յատուկ շատ բաներ սորված եմ այս գիրքէն:

Յիշողութիւնս գիւ կը տակն դէպի անցեալ, դէպի մանկութիւնս, երբ մեր ծնողներուն հետ կ'երթայինք մեր պարտեզները, ուր հասնելու համար կ'անցնէինք զանազան այլ հողամասերէ. ճամբուն ընթացքին կը հանդիպէինք տասնեակ ծանօթ եւ անծանօթ մարդերու, որոնք ծնողքիս հետ «բարեւ-Աստուծոյ բարին»՝ «այ սէլմու ալէջում», «ուա ալէջում ալ սէլմ»՝ «խաղաղութիւն ընդ ձեզ» կը փոխանակէին: Ես կը գարմանայի ու ինքզինքիս հարց կու տայի, թէ ինչո՞ւ օտար, իրարու անծանօթ մարդիկ կը բարեւէին գիրար: Սիրոյ եւ համերաշխութեան արտայայտութիւն եղող այս բառերը կը փոխանակուէին նաեւ երբ որեւէ առիթով կ'այցելէինք շրջակայ գիւղերը:

Այս գիրքին էջերէն միայն կրցայ հասկնալ մեր նախահայրերուն հեռատեսութիւնն ու իմաստութիւնը: Անոնք երկար դարեր կրցած են համերաշխ ապրիլ այս երկրի տեսակաւոր բնակչութեան հետ: Մեր նախահայրերը գիտակից նիստուկացով յաջողած են հանգիստ կեանք ապահովել իրենց եւ զալիք սերունդներուն համար: «Ալ սէլմու ալէջում» կը դարձի ամեն օր կրկնուող հասարակ նախադասութիւն մը ըլլալէ, ան իր մէջ կ'ամփոփէ իմաստութիւն եւ փոխըմբռնում: Այս բառերուն շնորհիւ «Արաբական Գարուն»էն առաջ խաղաղութիւնն ու ապահովութիւնը կը տիրէին մեր շրջակայ գիւղերուն մէջ: Այո՛, այս գիրքը գիւ կը տակն հեռաւոր մանկութեանս տարիները, երբ ամրան գով գիշերները ընկեր-ընկերուհիներով կ'անցնէինք գիւղի «Կեօլ Մտէն» կոչուող աղբիւրին մօտ, որ մեր ջուրի միակնեղուցն էր: Ամառները դըպրոցական արձակուրդները անցնելու համար կը մեկնէինք նաեւ Հալէպ: Ամէն ինչ հաճելի էր, ապահով ու խաղաղ:

Որպէս փաստ ըսածիս, բերեմ հետեւեալ օրինակը. երբ ճըսըր Ծըղուրի Ֆրանսացի կառավարիչը կը հրաւիրէ Եագուպիէի հայ երեւելի ազգայիններէն Սմբատ Ադա Քասսիսը՝ Երեցեանը գործակցութեան՝



այն պատրուակով, որ իրենք ալ քրիստոնէայ են, Սմբատի պատասխանը կ'ըլլայ. «Ծի՛շո՛ւ Է ըսածի, երկուքս ալ քրիստոնէաներ ենք, սակայն դուք օտար էք, երբեւիցէ պիտի հեռանաք, իսկ մենք այս երկրի բնակիչներն ենք ու մաս կը կազմենք այս երկրի ներդաշնակ երանգապակին»:

Այս դիրքորոշումին պատճառով հայ համայնքը ձեւով մը կը տուժէ, սակայն կը շահի երկրին հաւատարմութեան համբաւը եւ կը վայելէ վստահութիւնը տեղացիներուն, որոնք հետ կը շարունակէ ապրիլ խաղաղ ու ապահով:

Անեցնեմ, որ այս գիրքը գրուած էր հայերէնով: Հեղինակին գաւազներէն Պերճը գիրքը արաբերէնի թարգմանեց, որպէսզի բոլոր Եագուպիեցիները կարենան ծանօթանալ իրենց նախահայրերուն ապրած կեանքին: Արաբերէն տարբերակը խմբագրեց Ղընէյի գիւղէն Պիանքա Մատիան: Պատմական իրադարձութիւններուն հմուտ հեղինակը խնդրեց ինձմէ իրեն հետ վերատեսութեան եւթարկել թարգմանութիւնը:

Այսպիսով «Եագուպիէն Երեկ եւ Այսօր» գիրքի արաբերէն թարգմանութիւնը կ'ամբողջանայ եւ կը հրատարակուի: Տպագրութեան ծախսերը կը հոգան Եագուպիեցի ճարտարապետ, գիտակից ազգային տէր եւ տիկին Մուսիր Դարբինեաններ:

ՊԱՇՏՈՆԵԱՅԻ ԿԱՐԻՔ

Ս. Զառասնից Մանկանց Մայր եկեղեցւոյ թաղականութիւնը կարիք ունի.

- * Լուսարարի
- * Մաքրութեան տիկիններու

Հետաքրքրուողները կրնան դիմել Բերիոյ Հայոց Թեմի Ազգային Առաջնորդարանի Ընկերային Ծառայութեան Խորհուրդի քարտուղարութեան:

Հեռ. - 4612450:

ԼԵՒՈՆ ՇԱՆՔ-150



Լավա Միսկարեան-Միսանեան

Շանթ սովորութիւն ունեցած է դասը անարտելէն ետք խորունկ խոնարհիլ հմայուած աշակերտութեան առջեւ ու ապա դասարանէն ելլել... ինչպիսի՞ գայթակղութիւն...

Հոս տեղին է հատուած մը կարդալ Մ. Իշխանի յուշերէն.

«Չանգը կը ինչէր: Արդէ՞ն: Որքան շուտ կը թռեր դասասպահը: Չուր ծիգ պիտի ըլլար յոգնութեան նշաններ փնտռել ուսուցիչի եւ աշակերտներու դէմքին վրայ: Ինչպէս որ



մուտք գործած էր, նոյն ձեւով ալ Շանթ կը մեկնէր, մինչեւ մէջքը խոնարհելէ ետք դասարանին առջեւ:

Ինչ կ'երթար, բայց տղաքը լուռ կը մնային տակաւին իրենց տեղը: Հագուազի՛ւտ երեսոյթ: Շանթի արծարծած խնդիրներուն արծագանգը կը շարունակէր թրթռալ բոլորի հոգիներէն ներս»:

Այս չէ՞ միթէ մանկավարժութեան մեծագոյն յաղթանակը:

Թերեւս ոմանց չափագանց թուի այսքանը, սակայն նման քուրմ-ուսուցիչներն են որ իրապէս հոգիներուն կերտումին մէջ կը յաջողին ու անջնջելի հետք կը ձգեն, կը պատրաստեն ոչ միայն գիրքեր փոխարինող սերունդներ, այլեւ գիտակից ու նուիրեալ մտաւորականութիւն: Շանթը Պէյրութի տուած էր այդ փոխարինողներն ու մտաւորականութիւնը: Կ'երագէի նման ուսուցիչ ունեցած ըլլալ:

Դարձեալ ըստ Մ. Իշխանի, «Շանթ որքան գիտուն մանկավարժ, նոյնքան արուեստագէտ ուսուցիչ մըն էր... Արձանագործը մարմարի կոշտ գանգուածէն գեղեցիկ արտայայտութիւն մը կը կերտէ: Աշխատանքի պահուն ան կը շարժի ներքին ոգեւորութեան եւ ներշնչումի բուն մղումին անձնատուր: Ուսուցիչին ըրածն ալ ուրիշ բան մը չէ, սա տարբերութեամբ, որ անոր ստեղծագործող ճիգերը կը ներգործեն ապրող եւ թարմ էակներու վրայ, փոխանակ անշունչ իրերու: Ո՞վ յանցաւոր է, եթէ արձանը, նկարը կամ քերթուածը ծախողած գործեր դուրս կու գան. - արուեստագէտը, անշունչ, իր ներշնչումին եւ տաղանդին պակասով եւ արուեստ

տին թերիներով:

Շանթ միեւնոյն ըմբռնումը ունէր նաեւ ուսուցիչներուն վերաբերմամբ»:

Մանկավարժութեան հետ միասին քաջածանօթ ըլլալով նաեւ հոգեբանութիւն գիտութեան, ան աշակերտները դաստիարակելու միանգամայն ներգործող ու տպաւորիչ միջոցներու դիմած է: Ահա իր մանկավարժական «դասերն» մին, գորանուղակիորէն տուած է իր աշակերտներուն: Կրկին կը պատմէ Մ. Իշխան: Իր աշակերտութեան օրերուն ուսուցիչ մը դասարանէն ներս յաճախ կը չարախօսէ կամ կը բամբասէ Շանթին: Աշակերտները, որոնց համար Շանթ «անհպելի նուիրականութիւն էր», կ'ընդվզին եւ կ'որոշեն իրենց դժգոհութիւնը փոխանցել տեսուչին՝ նոյնինքն Շանթին: Շանթ հազիւ լսած՝ բարկութեամբ կը լռեցնէ զանոնք, ըսելով՝ «Թոյլ չեմ տար, որ յետէ մէկը իմ

ուսուցիչներուն մասին գէշ արտայայտուի... Ես կատարեալ վստահութիւն ունիմ իմ ուսուցիչներուս վրայ»: Իսկ երբ համարձակ աշակերտ մը, այնուամենայնիւ, կը շարունակէ բացատրել՝ Շանթ կ'ըսէ. «Սուտ ու ճղճիմ բաներ են ասոնք, ճեմարանը մէկ ընտանիք է, այդ ընտանիքին բոլոր անդամները իրար կը սիրեն. գացէր ու ձեր դասերով գբաղեցէք. անգամ մըն ալ այսպիսի յիմար հարցերով քովս մի գաք»: Ու Իշխան կ'եզրակացնէ. «Ճիշդ է, մենք ստացանք բարոյական ապտակ մը, բայց մեր տնօրէնը արեւի մեծցաւ մեր աչքին»:

Չե՞մ կասկածիր:

Արժէ խորհիլ, թէ ի՞նչ կ'ընենք մենք. արդեօք ինքներս չե՞նք մղեր կարգ մը աշակերտներ «լրտեսելու» իրենց ընկերները կամ ուսուցիչները, մանուկ տարիքէն պատրաստելով փոքրոգի ու ճղճիմ արարածներ: Հնարաւոր է, որ Շանթ առանձին խօսեցաւ նաեւ ենթակայ ուսուցիչին հետ, բայց ոչ թէ իր անձին դէմ յանցանքը անոր երեսին գարնելու համար, այլ կողմակիորէն հասկնելու, որ դաստիարակին գործը լալը ծուն ու սմտեղուկ մարդեր պատրաստելը չէ, նման մարդեր ապագային ալ նոյն ու արեւի գէշ վարք պիտի ցուցաբերեն:

Շանթի մանկավարժական մօտեցումին այլ օրինակ մը կը յիշէ Ծառուկեան («Մեծերը եւ Միւսները», 1992, Պէյրութ, էջ 21-22): Ուսուցիչ մը դասարանին մէջ կը կորսնցնէ պաղարկութիւնը եւ անիրաւացիորէն կ'ապտակէ ծրիավարժ տղայ մը, որ կատարեալ վարք ու բարքի տեր էր ու անմեղ: Տղան վի-

րաւորանքէն անդադար կու լայ: Ծառուկեան ընկերներուն հետ, որոնց կարգին եւ Մուշեղ Իշխան, կ'որոշեն տնօրէնին բողոքագիր գրել, որ արեւի սպառնալիքի ձեւ կ'առնէ՝ «Կ'ուզենք որ այս թրջավարի արարքը չկրկնուի, այլապէս պիտի փոխադարձենք նոյն ձեւով»: Շանթ կը մտնէ դասարան... պէտք էր ըստի կը խուժէ՝ եւ պահարանէն հանուած նամակը ձեռքը, կը սկսի որոտալ, թուրթը գլուխէն վեր շարժելով. «Այս ի՞նչ յանդուութիւն, ...չկրկնուի՞՞ անգամ մըն ալ... իմ պարտականութիւնս ինձի կը յիշեցնէ...»: Յանդիմանութիւնը ընդամենը գրելու ոճին համար էր: Աւարտելէն ետք երբ կ'երթար, յանկարծ կանգ կ'առնէ ու կը հարցնէ, թէ որո՞նք են որ նամակին տակ չեն ստորագրած: Երեք աշակերտներ ոտքի կ'ելլեն, ակնկալութեամբ, որ պիտի գնահատուին: Մինչդեռ Շանթ կ'ըսէ. «Եթէ համաձայն չէիք, պէտք է արգիլէիք որ այս նամակը գրուէր, չկրցաք՝ դու՛ք եւս պէտք է ստորագրէիք...»: Կ'երթայ, իսկ այդ երեքին դէմքերը... «Լուացքի տաշտէն ելած քամուելիք լաթերու տեսքը ունին»:

Մեծամասնութեան արարքը անարդարութեան դէմ տաքարիւն բայց ազնիւ քայլ էր, երեքինը անձնասիրութիւն ու նաեւ՝ ուսուցիչին առջեւ երեսպաշտութիւն: Նման դէպքեր դասարաններու մէջ կը պատահին, եւ ուսուցիչները երբեմն կը գնահատեն քննողներուն կեցուածքը: Բայց ահա թէ ինչպէս կրթեց Շանթ: Այսպէս՝ ճիշդ ատենին ու տեղին ըսուած մէկ նախադասութեամբ այնպէս կրթել, ինչպէս որ պիտի չագդեր ժամերով ընկերասիրութիւն ու համերաշխութիւն քարոզելը:

Շանթի գրական վաստակին մաս կը կազմեն բանաստեղծութիւններ, վէպեր ու թատերգութիւններ: Իր գրականութեան աշխարհը երագի ու վերացումի տանող մթնոլորտ է:

Նախքան հոն մտնելս կ'ուզեմ անձնական կեանքէս էջ մը վկայակոչել, գոր նախապէս, առաջին գիրքիս մէջ, յիշած եմ: Երեւանի Պետական Համալսարանի առաջին տարիս էր: Գիւղէ եկած՝ սակայն շատ

կարդացած ու նաեւ խիստ ռոմանթիկ էի, այնպէս որ միջավայրիս հետ տակաւին միաձուլուած չէի: Չբօսանքին, միջանցքի անկիւն մը կը քաշուէի ու երեսիս թափած մագերու մէջէն կը դիտէի անցուդարձը, երեւանցի համարձակ աղջիկներու կատակները: Օր մը ինձի մօտեցաւ տղոցմէ մէկը, որ արդէն յայտնի էր որպէս գիտունիկ: Մարդամօտ ու ազնիւ տղայ մըն էր: Առաջարկեց



դասէն փախչիլ, ելլել ընթերցասրահ ու միասին կարդալ գիրք մը, որ արգիլուած գրականութիւն է ու ինք ուրիշէ առած է կարճ ժամկետով: Փոքրիկ ու շատ հին գրքով մըն էր, հեղինակը՝ անծանօթ: Ելանք, քաշուեցանք սրահին հեռաւոր մէկ անկիւնը: Զանկի որ ան կարճատեւ էր, առաջարկեցի որ եւ կարդամ. մերժեց: Հիմա ան Համալսարանի փրոֆեսօր է՝ Սամուէլ Մուրատեան: Սկսաւ շշուկով ընթերցել, որ առաւել խորհրդաւորութիւն կու տար արդէն արտառոց գրածօքին: Անգալաբար երկուքս ալ փոխադրուեցանք անիրական, երագային սքանչելի աշխարհ մը: Երբ կարդաց վերջին բառը՝ «Իգո՛ւր...», մշուշներու մէջէն իրարու նայեցանք. շիկնած ու յուզուած էինք երկուքս ալ ու կարծես կտրուած էինք գետինէն: Գի՞րքը. Լեւոն Շանթ, «Հին աստուածներ»... Այդ օրէն Շանթ ինձի հետ է:

(շար. 5)

ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՅ...

Սկիզբ՝ էջ 16

բարձրացուց առ ամենաբարին Աստուած, որ գօտեպնդէ, գօրացնէ եւ ամրապնդէ մեզ մեր երթին մէջ: Երթ մը, որ պէտք է շարունակուի, ճանապարհ մը եւ ուխտագնացութիւն մը, որ սահման եւ վերջ չունի, ընթացք մը որ փակ դուռ չունի, այլ բաց ճանապարհ մըն է իւրաքանչիւրիս առջեւ եւ գոհողութիւն կը պահանջէ:

Արարողութենէն ետք, Գերշ. Տեր Մասիս Եպս. Չօպուեան «Սահակեան» սրահէն ներս հանդիպում ունեցաւ շրջանի պետական եւ ապահովական, ազգային եւ միութենական մարմիններու ներկայացուցիչ-

ներուն հետ, որոնք շնորհաւորեցին Առաջնորդին ընտրութիւնն ու բարի երթ մարտեցին անոր:

Իր սրտի խօսքը արտասանելով սրբազան հայրը վեր առաւ Սուրիական Հայրենիքէն ներս քրիստոնեայ-իսլամ խաղաղ գոյակցութեան արժեքը, օրինակ բերելով Զեսայի ժողովուրդը, որ մինչ օրս ունի իր սեփական եկեղեցին եւ դպրոցը, կը տիրապետէ հայերէնի եւ արաբերէնին, միաժամանակ պահած է Զեսայի բարբառը: «Այս է, որ կը բնորոշէ Սուրիոյ մէջ ապրելու հպարտութիւնը», եզրափակեց սրբազան հայրը:

Սրբազան հայրն ու պատուիրակութիւնը Չորեքշաբթի առաւօտուն վերադարձան Հալէպ:

ՅԻՇԵԼՈՎ ՏԱՐԱԲԱՆՏ ՄԵՍՐՈՊ ՊԱՏՐԻԱՐԸ



Լեւոն Շամոյեան

ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ ԵՒ ՀԲԸՄ ՂԵՍ ԱՌ ՂԵՍ

Գործնականորեն, Մեսրոպ պատրիարք գահակալեց հազիւ 8-9 տարի՝ 1998-ի Նոյեմբերէն մինչեւ 2007-ի վերջերը, երբ յայտնաբերուեցան իր խորհրդարար հիւանդութեան լուրջ նախանշաններն ու հետեւանքները եւ ան, հետզհետէ, ամբողջովին դադարեցաւ գիտակից ու աշխատունակ տարր մը ըլլալէ:

Այս կարճատեւ ժամանակաշրջանի ամենէն բեղմնաւոր եւ յուսալից տարիներն ալ ԱՌԱՋԻՆ ՀԻՆԳ ՏԱՐԻՆԵՐԸ եղան, որովհետեւ պատրիարք սրբազանը, ակնհայտ, 2005 թուականէն ասդին, գրեթէ կորսնցուց այն անդորրալի ու խաղաղաւետ կենցաղը, որ կ'ակնկալուէր թէ ի՞րոք պիտի ըլլար, ու դեմ-յանդիման եկաւ չափազանց նեղացուցիչ Նորաբնոյթ տաղտուկներու:

Չորրորդական, անշատ սուր բախումներ ունեցաւ ՀԲԸՄ-ի ՆԻԼ Եորքի կեդրոնական ղեկավարութեան հետ, յետոյ անհաւատալի համեմատութիւններու հասնող բախումներ ունեցաւ պոլսահայ թերթերու հետ («Ճամանակ» եւ «Ալլոս»), Հայկ. Ցեղասպանութեան հարցով՝ իր վրայ հրաւիրեց թուրք որոշ շրջանակներու անզսպելի գայրոյթը եւ այլն, եւ այլն:

Պետք է խոստովանուի սակայն, որ նշեալ տաղտուկներուն մէկ կարեւոր մասը արդիւնքն էր պատրիարք սրբազանի նախաձեռնութեան գործնական եւ իր գորաւոր անհատականութենէն բխող անտեղի տալի կեցուածքներուն:

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Կեդրոնական Վարչութեան հետ իր ունեցած բախումը մէկն էր, անհասկի, այն հարցերէն, որոնք հայ մամուլի մէջ փոթորիկ մը յառաջացուցին Մեսրոպ պատրիարքին անուսին շուրջ:

Ի՞նչ էր խնդիրը: Սփիւռքահայ կեանքին ու մամուլին հետեւողները պիտի յիշեն, որ ՀԲԸՄ-ի ՆԻԼ Եորքի կեդրոնը 2004-ին որոշէր երկու փոփոխութեամբ փակել Կիպրոսի Մեթոնեան Կրթական Հաստատութիւնը, այլեւս անպտուղ նկատելով անոր գոյութիւնն ու գործունէութիւնը: Այս ոչ-ցանկալի ու տխուր որոշումը թեր ու դեմ կարծիքներու եւ հակադրութիւններու դուռ բացէր երկուսուրեք: Մեթոնեան վարժարանի աշխարհատարած նախկին սաները գորաշարժի ենթարկած էին իրենք զիրենք՝ խափանելու համար իրենց սիրելի դըպրոցին փակումը: Բայց ՀԲԸՄ-ի ղեկավարութիւնը կը թուէր թէ անխախտ էր իր որոշումին մէջ: Ետդարձ կատարելու տրամադրութիւն չունէր:

Շիկացած մթնոլորտ մը կը տիրէր ՀԲԸՄ-ի մասնաճիւղերուն մէջ՝ Պեյրուէն մինչեւ Լոս Անճելես: Ծի՜շո՞ այդ օրերուն (2005-ի Յունուարին), ռումբի պայթիւնի մը

չափ զօրաւոր հնչեց այն լուրը, ըստ որուն՝ Պոլսոյ Պատրիարքութիւնը Գալիֆորնիոյ Գերագոյն Ատենին (ակնհայտ էր, որ Նիկոսիոյ դատարաններէն մէկուն) մօտ դատ բացած էր ՀԲԸՄ-ի դեմ, նիւթական ու բարոյական որոշ պահանջներով:

Ի՞նչ պատահած էր: Մեսրոպ պատրիարք ի՞նչ դրդապատճառներով այսպիսի դատական հարց մը կը յարուցէր անակնկալօրէն, ճա-



Մեթոնեան վարժարանի մայր շէնքը

կատ բանալով հայ իրականութեան մեծագոյն միութիւններէն մէկուն դեմ:

Պատրիարքարանը, ըստ երեւոյթի, երկու դրդապատճառ ունէր. Ա) Ան կը խորհէր որ ՀԲԸՄ-ը Մեթոնեան վարժարանը փակելու իրաւունք չունի, որովհետեւ միութիւնը միայն ԿՏԱԿԱԿՏԱՐՆ Ե Մեթոնեան բարերար եղբայրներու կտակին. այսինքն՝ դպրոցը փակելու, անոր տարածքներն ու շէնքերը ծախելու իրաւունք չունի:

Բ) Ան յիշեցնելէ ետք՝ թէ Մեթոնեան Կտակը նախապէս (20-ական թուականներու սկիզբը) Կ. Պոլսոյ Պատրիարքութեան տնօրինումին յանձնուած էր, եւ միայն 1926-ին է որ փոխանցուած էր ՀԲԸՄ-ին, հիմա կը յուշէր, որ այդ նոյն թուականին ստորագրուած ԵՌԱԿՈՂՄ համաձայնութեամբ մը (ՀԲԸՄ, Պատրիարքարան եւ Կարապետ աղա Մեթոնեան)՝ ՀԲԸՄ-ը ամեն տարի 1000 անգլիական ոսկի պարտէր տրամադրել Կ. Պոլսոյ աթոռին: Այս խոստումը բնաւ չէր յարգուած:

Հանրային կարծիքը շատ ալ յստակագրաւոր մը չունէր անշուշտ վերի մանրամասնութիւններուն մասին: Ոմանք կը խորհէին որ Պատրիարքարանը լուրջ սխալ մը գործած էր դատական հարց յարուցելով հայկական մեծ միութեան մը դեմ: Եթէ նիւթական մատակարարումի թերացումներ կային, կարելի չէ՞ր գանձել հարթել «ներքին» կարգով, հեռու՝ օտար դատարաններու ատեններէն...:

ՀԲԸՄ-ի ՆԻԼ Եորքի կեդրոնը կծու ոճով շարադրուած քանի մը հաղորդագրութիւններով հակադրեց Մեսրոպ պատրիարքին: Հակադրեցութիւն ցուցաբերեց նաեւ

Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը: Անոնք անճիշդ ու աղաւաղեալ նկատեցին պատրիարքին մեղադրանքները ու գայն ամբաստանեցին թուրք պետութեան ցուցմունքներով շարժած ըլլալու յանցանքով...:

Շուրջ տարի մը անց (2005 Դեկտեմբեր), մինչ կը շարունակուէր դատական գործընթացը, Մեսրոպ պատրիարք ի՞ր իսկ ստորագրութեամբ՝ պոլսահայ մամուլին մէջ լոյս կ'ընծայէր «Մեթոնեանի տագնապը հայ մշակոյթի ճգնաժամն է» խորագրով լուսաբանական ընդարձակ գրութիւն մը, որով անգամ մը եւս կը պայշտպանէր Մեթոնեան վարժարանի փակումին ընդդիմաւալու իր սկզբունքային կեցուածքը:

Երբեմնի այս պատկառելի հաստատութեան հսկայ շէնքերը, իրենց բազմատասնեակ դասասենեակներով, թափուր են՝ Գրիգոր եւ Կարապետ Մեթոնեան կեսարացի կտակարար եղբայրներու կիսանդրիներուն քարացած նայուածքներուն տակ...:

ՀՐԱՆՊ ՏԻՆՔ ԵՒ ՄԵՍՐՈՊ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ԱՐՑՈՒՆՔՆԵՐԸ...

1996-ի այն օրէն ասդին, երբ սկըսաւ իրատարակուիլ «Ալլոս» թրքալեզու շաբաթաթերթը (ունի հայերէն մասնակի էջեր), ո՛չ միայն պոլսահայ իրապարակագրութեան, այլեւ բովանդակ թուրքոյ մամուլ կեանքին մէջ հետզհետէ տիրապետող անուն մը դարձաւ անոր խմբագիրը՝ ՀՐԱՆՊ ՏԻՆՔ:

Հրանոյ Տինք իր թերթին Ա. էջին վրայ ստորագրած առաջնորդող յօդուածներով ու վերլուծական գրութիւններով ԵՐԵՒՅԻՅ մը դարձաւ շուտով: Իր յանդուգն ու սրտաբուխ արտայայտութիւնները եւ «թապու»ներ քանդելու պատրաստակամութիւնը նորութիւններ կը բերէին ընթերցողին, բազմութիւններ կը հաւաքէին իր շուրջ:

Քիչէր գիտէն սակայն, որ «Ալլոս»-ի հիմնադրութեան մէջ եական ու կարեւոր դեր ունեցած էր նաեւ Մեսրոպ Եպիսկոպոս Մութաֆեան, որ արդէն, սկզբնական շրջանին, յօդուածներով կ'աշխատակցէր թերթին:

Երկուքն ալ, Մեսրոպ Եպ. եւ Հրանոյ Տինք, համակարծիք էին այն գաղափարին՝ թէ հարկ էր դուրս բերել պոլսահայ համայնքը իր անհրաժեշտ ներամիտի ու մեկուսացեալ վիճակէն ու գայն բանալ դեպի թուրք հանրութիւնը, դեպի արտաքին աշխարհ:

Օգտակար ու բարերա՞ր էր այսպիսի առաջադրանք մը, չէ՞մ գիտեր: Ստոյգ է սակայն, որ այ՛դ նպատակով կը հիմնուէր «Ալլոս»-ը, որ առաւելաբար թրքերէն իրատարակութիւն մըն էր ու իսոսակից պիտի ունենար թրքալեզու այլազան բազմութիւններ (հայ, թուրք, քիւրտ), անոնց պատմէր հայուն երգերն ու վերջերք...:

Պատրիարքական ընտրութիւններէն ետք, 90-ական թուականներու վերջերը, նկատելի սկսաւ դառնալ ամենուն, թէ հետզհետէ խրամատ մը կը բացուէր ընդմէջ Նորընտիր պատրիարքին ու «Ալլոս»-ի խմբագիրին: Գաղափարակից նախկին գործընկերները տակաւ առ տակաւ կը հեռանային իրարմէ, սլաքներ կ'արծակելին իրարու, ա՛լ չէին հանդուրժեր զիրար...:

Յաջորդող տարիները հաշտութեան կամ բարեկամութեան վերահաստատման հորիզոններ չբացին բնաւ: Հրանոյ Տինք ու Մեսրոպ պատրիարք մնացին համայնքին ամենէն երեւելի երկու անհաշտ դեմքերը...: Մեսրոպ պատրիարք «Ալլոս»-ի մէջ շարունակ թիրախ դարձաւ Տինքի ծանր եւ կծու քննադատութիւններուն: 2005-ին, մեր այս սիրելի երկու դեմքերուն հակադրութիւնը հասնէր եր արդէն անբաղձալի համեմատութիւններու: Հրանոյ Տինք տեւաբար կը մեղադրէր

Աշակերտական Անկիւն

ԹԱՏՐՈՒՄԻ ԽՈՐՀՈՒՐԴ



Կային Գայայճեան

Լաթաքիոյ հայ գաղութը ցնծութեան մէջ էր, Զալէպէն ժամանած «Աղամեան» թատերախումբը պիտի հրամցներ մեզի «Ծերունին եւ Լեռը» թատերգութիւնը: Ծնողքիս հետ ներկայացայ թատերասրահ: Թատերգութիւնը լուսարձակի տակ կ'առնէր Յեղասպանութիւնը: Ապրիլ ամիսն էր, երբ թուրքերը շարդեցին մէկուկէ միլիոն անմեղ հայեր, տեղահան ըրին գիրենք, սպանեցին մտաւորականներ, կոյս աղջիկներ, կիներ եւ երեխաներ: Եփրատ գետը արիւնով ներկուեցաւ եւ մնացած ողջ ժողովուրդը բռնեց գաղթի ճամբան ու տարածուեցաւ աշխարհով մէկ: Յոյսը պարուրեց հոգիս, երբ վեր-յիշեցի, թէ հայ ժողովուրդը ինչպէս վերածնաւ եւ շարունակեց ապրիլ ու պահանջատեր ըլլալ: 104 տարի անցեր է, սակայն պատմութիւնը կը կրկնուի:




Այս խորհուրդն էր, որ «Ծերունին եւ Լեռը» ներկայացուց մեզի: Կրկին թրջական բարբարոսութիւններուն հետեւանքով, պատերազմին հետեւանքով սուրիահայը կը հեռանար իր պապենական օճախէն 104 տարի ետք, սակայն ծերունին չէր ուզեր գաղթել. ան կ'առնէր իր արմատներուն, որովհետեւ հայուն գաղթը դէպի օտար ափեր, անյայտ ճակատագրին գիրկը պիտի նետեր. ուստի ան վերադարձաւ. Զեսապ՝ իր ծննդավայրը, ուր հասակ նետած ու սնած էր մաքուր օդով ու ջուրով:

Բոլորս հեռացանք սրահէն համոզուած, որ պիտի շարունակենք կառնչած մնալ մեր արժէքներուն, իսկ եթէ ստիպուինք գաղթի ճամբան բռնել, պիտի ուղղուինք հայրենիք՝ Զայաստան:

Է. կարգ

Լաթաքիոյ Ազգ. Սրբոց Նահատակաց Վարժարան

ՄԵՐ ՅԱՂԹԱՆԱԿԸ



Գանկի Մանճեան

Գրաւորներու ծանր բեռը թօթափելէ ետք, մեր դպրոցի տնօրէնութիւնն ու ուսուցչական կազմը, դպրոցական հաճելի պտոյտ մը կազմակերպեցին բնութեան գեղեցիկ գիրկին մէջ:

Գարնանային գեղեցիկ ամառու մը, երբ արեւի հաճելի շողերը եւ անոր հետ փչող մեղմ գեփիւմը աշխուժութիւն կը տարածեն ամէն կողմ, դպրոցի մեծ ինքնաշարժներով ուղղուեցանք դէպի Լաթաքիոյ նշանաւոր մարզաւանը:



Պտոյտի գլխաւոր նպատակն էր, ընկերային հաճելի մթնոլորտի մէջ, դպրոցէն եւ դասերէն հեռու, վայելել բնութեան գեղեցկութիւնը, ինչպէս նաեւ քաջալերել եօթերորդ եւ ութերորդ կարգերու տղոց միջեւ կայանալիք ոտնագնդակի մրցաշարքը: Մենք ընկերուհիներով, մըրցաշարքը քաջալերելէն աւելի, հետաքրքրուած էինք անշուշտ մեր բերած տեսակաւոր ու տելիքները ճաշակելով, կանաչապատ դաշտերուն մէջ ասդին անդին վազվզելով, եւ միասնաբար յիշատակելի լուսանկարներ նկարելով, մինչ մեր ընկերները հեւիհեւ կը վազէին ոտնագնդակին ետեւէն: Մեծ յոյս ունէինք, որ մեր դասընկերները պիտի խլեն բաժակը: Մրցաշարքի աւարտին ութերորդ դասարանի մեր ընկերները յաղթեցին: Ծափերով ու բացականչութիւններով ողջունեցինք մեր ընկերներուն յաղթանակը ու բարձր տրամադրութեամբ վերադարձանք յաջորդ տարին կրկին յաղթելու յոյսով:

Է. կարգ

Լաթաքիոյ Ազգ. Սրբոց Նահատակաց Վարժարան

ԽՄԲԱՊԵՏ...

Սկիզբ՝ էջ 10

ՆԵՆ: Կիրակի օրերը միասին սինեմա եւ ճաշարան կ'երթայինք: Մէկ խօսքով, մտերիմներ դարձեր էինք:

Պէյրուք գտնուած միջոցիս, օր մըն ալ իմբապետը ինձի յայտնեց, որ մէկ շաբաթով Զալէպ պիտի մեկնի: Դուն՝ մայրս եւ մորաքոյրս քանի մը «յարմար» աղջիկներու ծնողներուն հետ աղջիկտեսի ժամադրութիւն առեր էին, եւ Սագօս պիտի տանէին տունէ-տուն աղջիկտեսի, որպէսզի «յարմարագոյն» աղջկան հետ, ծնողաց համաձայնութեամբ, նշանախօսութիւն կնքէր եւ Տիրոջ կամքով, կամ աւելի ճիշդը, իրար հաւնելու պարագային՝ ամուսնութիւն ալ կնքէին:

Զալէպէն ի վեր, Սագօս իր ձեռագործ գեղեցիկ վանդակներու մէջ գոյնզգոյն ու անուշիկ սարեակներ պահել կը սիրէր: Պէյրուքի իր յարկաբաժինին մէջ ալ սարեակ մը կը պահէր այդ վանդակներէն մեկուն մէջ: Զալէպ երթալու նախօրեակին, իր յարկաբաժինին եւ խանութին բանալիները ինձի յանձնեց եւ խընդրեց, որ իր բացակայութեան ջրեմ եւ կերակրեմ սարեակը, նաեւ՝ եթէ առիթ ունենամ, դպրոցէն արձակուելէ ետք, յետմիջօրէններուն մէկ-երկու ժամ խանութը բանամ եւ յաճախորդներէն ժամացոյցի նորոգութեան պատուէր ապահովեմ եւ նորոգուած ժամացոյցները իրենց տիրոջ յանձնեմ: Սագօս այդ սարեակը շատ կը սիրէր: Ամէն երեկոյ վանդակը առաստաղին ամրացուած կեռէն վար կ'առնէր, դուռը կը բանար եւ ցուցամատը սարեակին կուրծքին տակ դրած կը սպասէր, որ թռչնիկը թառին վրայէն իր մատին վրայ ոստնէ: Յետոյ ցուցամատը սեղանին կը մօտեցներ, որպէսզի սարեակը սեղանին վրայ ցատքէ, եւ դէմդէմի, փոխն ի փոխ սուլելով՝ մարդ եւ թռչուն երկխօսութեան կը բռնուէին:

Թռչնիկներու ուսելու եւ խմելու սովորութիւններուն մասին շատ բան չէի գիտեր: Անհոգաբար խորհելով, թէ Զալէպ երթալէ առաջ Սագօսին տուած կուտն ու ջուրը գոնէ երկու-երեք օր կը գոհացնեն սարեակին սննդական կարիքները, առաջին երկու օրը թռչնիկին ո'չ ջուր տուի, ո'չ կուտ: Երրորդ օրը ազգականիս յարկաբաժինէն Սագօսին յարկաբաժինը բարձրացայ: Փակակնքին բռնակը դարձուցի եւ կամացուկ մը դուռը բացի: Գլուխս կիսով մը ներս մտցուցի եւ ականջներս սրած մտիկ ըրի՝ յուսալով սարեակին դայլայլը լսել, բայց ձայն ծայտուն չլսեցի: Սիրտս, որ աստիճաններէն վեր բարձրանալու պահուստը սկսեցի քիչ մը աւելի արագ տրոփել, հիմա սովորականէն երկու անգամ աւելի արագ կը բաբախէր: Խեղճ, անմեղ թռչնիկին քարացած ու ցուրտ սատակը վանդակի տախտակամածին վրայ կը հանգէր:

Ոճիր գործած էի: Սպանած էի վանդակուած, ինքնօգնութեան անատակ արարած մը, որուն սնունդ մատակարարելու պարտականութիւնը ինձի յանձնարարուած էր: Անձիս

հանդէպ նողկանք եւ ատելութիւն կուտակուեցաւ սրտիս մէջ: Առաջին քանի մը վայրկեաններուն, յուզումս այնքան անտանելի էր, որ նոյնիսկ չմտածեցի, թէ ինչպէ՞ս Սագօսին պիտի յայտնէի իր սիրելի սարեակին մահը: Այդ շաբթուան մնացեալ օրերը ա'լ դպրոց չգացի: Զէի կրնար մարդու երես նայիլ: Ինձի այնպէս կը թուէր, թէ բոլորն ալ տեղեակ էին գործած ոճիրէս: Աղէտէն չորս օր ետք, Սագօս Պէյրուք պիտի վերադառնար: Ծամբորդատար ինքնաշարժներու կեդրոնը կը գտնուէր իր խանութին հանդիպակած կողմը, նոյն ճամբուն վրայ: Ես ալ արդէն դպրոց երթալու տեղ, ամբողջ ժամանակս խանութը կ'անցընէի: Այնպէս որ, երբ Զալէպէն եկող ինքնաշարժը խանութին փողոցը մտաւ, վազելով գացի եւ սպասեցի, որ Սագօս ինքնաշարժէն իջէ: Դէմքիս արտայայտութեան անմիջապէս կռահեց կացութեան լրջութիւնը: Գլուխս կախած՝ առանց իրեն նայելու կը փորձէի խօսիլ. բառերը երկաթի սրածայր կտորուանքներու պէս, չորցած կոկորդս կը ճանկնուէին: Սագօս չգայրացաւ, չպոռաց-չկանչեց, ոչ ալ յանդիմանեց գիս. միայն ուզեց գիտնալ պատճառը՝ «Ի՞նչ եղաւ»: Խոստովանեցայ: Արդէն իր խանութին առջեւ էինք: Ներս մտանք: Իմբապետը նստաւ իր գործի աթոռին վրայ: Երկար ատեն ոչինչ ըսաւ: Երբ սկսաւ խօսիլ, ձայնին մէջ ատելութեան կամ նոյնիսկ սոսկ հիասթափութեան շոշորթն իսկ չկար: Միայն ըսաւ, որ սարեակը շատ կը սիրէր եւ հիմա շատ պիտի կարօտնար գայն: Զգացած էր հոգեվիճակս եւ կ'ուզէր գիս սփոփել: Երանի բարկանար, պոռար-կանչէր, նոյնիսկ ապտակէր գիս: Բայց ասոնց տեղ, այդ բարեսիրտ, մեծահոգի մարդը, մէկդի դրած իր կոտացող ցաւը, կը փորձէր գիս մխիթարել: Տասնվեց տարեկան անփորձ պատանիի հոգեկան նեղիկ աշխարհս ընդլայնեցաւ եւ բիրտեղացաւ այդ օր: Սագօս ինձի սորվեցուցած էր ներողամտութեան հօօրութիւնը:

Երկու շաբաթ ետք, հայրս տեղեկացուց, որ դպրոցները բացուէր էին եւ ատենը եկած էր Զալէպ վերադառնալու: Ինչպէս քիչ մը վերը նշած էի, կ'ուզէի օր առաջ Զալէպ վերադառնալ: Բայց հիմա, երբ կ'ողջագուրուէի գիս այնքան ազնուօրէն հիւրընկալած ազգականներուս եւ Սագօսին հետ, յուզումի ալիքներ կը բարձրանային կոկորդէս վեր եւ աչքերուս ու կոպերուս արանքէն կայլակ առ կայլակ դուրս թորելով՝ յուշիկ վար կը սահէին վտիտ երեսէս:

Չիս Զալէպ տանող ինքնաշարժի պատուհանէն, երբ ականատես եղայ հորիզոնին վրայ փայլփլող Զալէպի առաջին աղօտ լոյսերուն, անհո'ւն, անզուգական երջանկութիւն մը զգացի եւ արտասովոր անդորրութիւն մը համակեց ամբողջ էութիւնս: Կը վերադառնայի սիրելի ծննդավայրս, ուր կ'ապրէին սիրելի ծնողքս, քոյրս, եղբայրս եւ սիրելի ընկերներս: Ինչպէ՞ս գիտնայի, որ այդ օրէն երկու տարի չանցած, անվերադարձ պիտի բաժնուէի այդ բոլորէն:

Մ Տ Ա Մ Ա Ր Զ Ա Ն Բ



ԽԱԶԲԱՌ (ՄՆ 299)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1												
2												
3												
4												
5												
6												
7												
8												
9												
10												
11												
12												

Հորիզոնական

- Գիրութին:
- Սան: Հակառակ՝ ձայնակիչ:
- 5040: Թաքուն պայթուցիկ: Գոյութիւն ունին:
- Լեզուով մը այո՛: Խեչափառ: Հակառակ՝ առարկայ:
- Հակառակ՝ լեզուով մը այո՛: Ակռաներու շարք:
- Հակառակ՝ տառի մը հարեւանները: Այն քաղաքը, ուր Յիսուս գործեց իր առաջին հրաշքը: 1020:
- Հանքային համեմ: Առարկայ: Հացի ամբողջական կտոր:
- Ժամանակ: Հակառակ՝ կնոջ հայրը:
- Տենչալի:
- Թուր: Սիամանթոյի ծննդավայրը:
- Աշխատատեղ: Ոչ հասուն:
- Արտասուալից:

Ուղղահայեաց

- Պարտատեր:
- Ասացուածքը կ'ըսէ. «... մարդը անօթի չի մնար»: Հակառակ՝ աղէի թել:
- Հակառակ՝ տարածքի միաւոր: Կիլիկիոյ քաղաքներէն:
- Մաքուր, վճիտ: Մանգաղի կոթ:
- Հակառակ՝ անասունի կերակուր: Տարիքոտ: Ցուցական դերանուն:
- Հայերէն լեզուի քերականական հոլովներէն: Հակառակ՝ անձնական դերանուն: Ստեղծուած արարած:
- Կօշիկ: Հակառակ՝ բուն, կոծի:
- 5400: Կրկնուած քաղաձայններ:
- Հող հանելու գործիք: Բառերու հաւաքածոյ:
- Բայց: Կառուցել: Տառի մը անունը:
- Արական անուն: Ցուցական դերանուն:
- Սին: Հակառակ՝ աղբիւր: Իրարայայջորդ տառեր:

ՍՈՒՏՈՔՈՒ (ՄՍ 298)

Տեղաւորէ՛ (1-9) թուանշանները (9x9) քառակուսիներուն մէջ այնպէս, որ իւրաքանչիւր հորիզոնական եւ ուղղահայեաց տողի մէջ, ինչպէս նաեւ (3x3) տուփիկի մէջ մէկ անգամ արձանագրուին:

		9	2		1		5	7
					9	6		
4	8	1					3	2
		6		7			4	3
3		2	5		8			
			1	6			9	
	1				4		6	
9		7					2	
5		4	3	9		1		

Պատրաստեց Մարինա Զիւլբոշեան-Պողիկեան

ՊԱՅՈՒԾ ԲԱՌ (ՄՊ 69)

Հայաստանի պատմական մայրաքաղաքները ջնջելով գտէ՛ք պահուած բառը:

Պահուած բառը 11 տառերէ բաղկացած պատմական մայրաքաղաքներէն մէկը կը ներկայացնէ:

ա	ե	ր	ե	ւ	ա	ն	շ	ա	ե
ա	ր	դ	ո	ւ	ի	ն	ի	ր	ր
բ	ր	տ	տ	վ	ի	գ	ր	շ	ու
ա	ր	մ	ա	ա	ա	ն	ա	ա	ա
գ	կ	ք	ա	շ	ա	ն	կ	կ	ն
ա	ա	ա	ա	ւ	ա	կ	ա	ա	դ
ր	ր	ն	ե	դ	ի	տ	ւ	ւ	ա
ա	ս	ի	ր	տ	ա	ր	ա	ա	շ
ն	ե	ր	կ	ի	ր	ք	ն	ն	ա
վ	ա	դ	ա	ր	շ	ա	պ	ա	տ

Շիրակաւան, Վաղարշապատ, Երուանդաշատ, Արտաշատ, Բագարան, Արմաւիր, Արշակաւան, Վան, Դուին, Կարս, Անի, Երեւան, Երկիր, քաղաք

ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

ԽԱԶԲԱՌ (ՄՆ 298)

ՍՈՒՏՈՔՈՒ (ՄՍ 297)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	խ	ր	ա	խ	ո	յ	ա	ե	ր	ա	գ	
2	ա		ր	ո	խ		կ	ր	ե			ա
3	գ	ր	ա	ւ		ա	ո	ա	կ		ա	ր
4	մ	ա	ր	գ	ա	ր	ա	ն		ա	ր	դ
5		խ		ա	ն		մ		ր	ա	ա	
6	ք			կ	ի	գ	ի	շ		ծ	ա	գ
7	ա	ր	ի		ւ	ո	կ		ա	գ	ի	
8	ր				հ		բ		թ	ե	ր	
9	բ	ա	հ		ա	ր	կ	ե	ր		ա	
10		յ	գ		ո	ա		կ	ե		գ	օ
11	գ	բ	օ	ա	ա	ղ	ա	ո	յ	ա		
12	ի		ր	ա	ա		ա	ր	ա	կ	ա	ն

2	7	8	9	1	4	5	6	3
5	6	1	8	7	3	4	9	2
4	9	3	6	5	2	8	1	7
9	1	6	7	4	5	3	2	8
8	4	7	3	2	6	9	5	1
3	2	5	1	9	8	6	7	4
6	3	2	5	8	1	7	4	9
1	8	9	4	6	7	2	3	5
7	5	4	2	3	9	1	8	6

ՊԱՅՈՒԾ ԲԱՌ (ՄՊ 68)

Պահուած բառը՝ «Յոգնութեան Հետ»

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հալէպի «Զարմէլիդ»-ի շրջանին մէջ եջ գտնուող, համաքրիստոնէական ժամանակաւոր գերեզմանատունէն Հայ Առաքելական Եկեղեցւոյ ննջեցեալներու աճիւնները Ազգ. Գերեզմանատուն փոխադրելու ծրագիրը, պետական եւ եկեղեցական օրէնքներու յարգումով կը շարունակուի եւ արդէն հասած է իր աւարտին:

Արդ, կը խնդրենք պատերազմի տարիներու հանգուեալներու պարագաներէն, որոնք մինչեւ օրս չեն ներկայացած տեղափոխելու իրենց պարագաներու աճիւնները, դիմել Ազգ. Գերեզմանատուն, քարտուղարութեան գրասենեակ՝ մինչեւ ամենաուշը մինչեւ 30 Օգոստոս 2019, իրենց հետ բերելով հանգուեալին թաղման ստացագիրը, որպէսզի ծանօթանան կատարուելիք կարգադրութիւններուն, ամբողջացնեն անհրաժեշտ փաստաթուղթերու ներկայացումը եւ կատարուին փոխադրած յանձնառութիւնները:

Դիմումները կը կատարուին ամէն օր, առաւօտեան ժամը 10:00-էն 2:00 բացի Կիրակի օրերը, Ազգ. Գերեզմանատան մէջ, քարտուղարութեան գրասենեակը:

Չներկայանալու պարագային մնացեալ աճիւնները վերոյիշեալ թուականէն ետք պիտի տեղափոխուին եւ գտնուին Ազգ. Գերեզմանատուն փեթակներուն մէջ:

Վստահ ենք, որ մեր յարգելի ժողովուրդը հասկացողութեամբ պիտի վերաբերի այս տնօրինումներուն հետ եւ մեր ննջեցեալներուն աճիւնները պիտի գտնեն իրենց հանգիստը Ազգ. Գերեզմանատան մէջ:

Բերիոյ Հայոց Թեմի
Կալուածոց Հոգաբարձութիւն

ԻՆՉ ԿՐՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ



ԽՈՅ

Յաջողությունը կ'ուղեկցի ձեզի ողջ շաբթուան ընթացքին: Աշխույժ էք, խանդավառ ու լաւատես:



ՑՈՒԼ

Դուք ձեր ուժին ու կարողութիւններուն կը վստահիք եւ կը գայրանաք, երբ մարդիկ փորձեն կառավարել կամ ուղղել ձեզ:



ԵՐԿՈՒՐԵԱԿ

Դուք արժանի էք գնահատուելու, բայց պէտք է կարելոր քայլեր առնէք հոն հասնելու համար: Ձեր պարտաւորութիւնները պիտի բազմանան այս օրերուն:



ԽԵՅՂԵՏԻՆ

Հաւատարիմ ու հոգատար ընկեր էք: Համոզելու կարողութեամբ օժտուած էք նաեւ: Այս իսկ պատճառով ձեր ընկերային կեանքը հարուստ ու ջերմ է:



ԱՈՒԻԾ

Ձեր աշխատանքին փոխարէն արդարորէն չէք վարձատրուիր: Պաշտպանեցէք ձեր իրաւունքները եւ մի՛ համաձայնիք ձեզի չյարմարող պայմաններուն:



ԿՈՅՍ

Նորութիւն մը պիտի մտցնէք ձեր կեանքին մէջ, յատկապէս՝ ձեր արտաքին կերպարանքին վրայ: Աշխուժութեամբ պիտի մասնակցիք տարբեր ընկերային գործունէութիւններու:



ԿԵՒՈՔ

Խորապէս պիտի տպաւորէք ձեր շրջապատը հաղորդակցութեան ձեր հիանալի հմտութիւններով: Մարդիկ յաճախ պիտի փափաքին ընկերակցիլ ձեզի եւ գրուցել ձեզի հետ:



ԿԱՐԻՃ

Յամառութեամբ պիտի յաղթահարէք բոլոր դժուարութիւնները: Ձեր ճշդ դած նպատակին հասնելու համար ամէն ջանք ի գործ պիտի դնէք:



ԱՂԵՂՆԱՌԻ

Կարելոր քայլի մը պիտի դիմէք եւ ձեր նպատակներէն մէկը պիտի իրականացնէք: Իրար մի՛ անցնիք, եթէ նոյնիսկ յոգնութիւն գգաք: Դժուար ու պատասխանատու շրջան մըն է:



ԱՅՏԵՂԶԻՐ

Ուրախ եւ բախտաւոր պահեր պիտի ապրիք ձեր ընտանիքի անդամներուն ներկայութեան: Ձեռնածալ մի՛ մնաք, աշխատեցէք լուծումներ գտնել ձեր հարցերուն:



ՋՐՅՍ

Բախտը ձեզի հետ պիտի ըլլայ այս օրերուն: Ձեր ծրագիրը գործադրելու սկըսեցէք՝ առանց ժամանակ վատնելու: Հանդարտօրէն մասնակցեցէք ձեր ընկերութեան մէջ տեղի ունեցող քննարկումներուն:



ՋՈՒԿ

Օրէնքները յարգեցէք եւ մի՛ գայրանաք: Աշխատանքային ճամբորդութիւն մը պիտի կատարէք: Ձեր պարտականութիւնները պիտի շատնան. համբերող եղէք:



ՄԵՆՔ ԵՒ ՄԵՐ ԶԱՒԱԿՆԵՐԸ

Տղթ. Այտա Ասատուրեան-Աֆարեան

Մարդը, որպէս ընկերային էակ, կը ծնի եւ կը մեծնայ ընկերութեան մը մէջ, որուն յատուկ է լաւ եւ երբեմն քննարկելի սովորութիւններ ու մօտեցումներ: Մենք մեզ չենք կրնար պատկերացնել առանց մեզ շրջապատող ընտանիքին եւ ընկերներուն հետ յարաբերութիւններուն:

Այս բոլորը աննկատ եւ հարթ կ'ընթանան ընդհանրապէս, սակայն հակասութիւնները եւ անհասկացողութիւնները կը շատնան, երբ ընտանիքը կը համալրուի նորածինով մը: Ծնողական բնագոյր յաճախ կը բախի ընտանիքի մեծերուն եւ շրջապատող մարդոց ունեցած մօտեցումներուն: Միև այդ հարթ եւ սիրով համարուած յարաբերութիւնները կըրնան պղտորիլ:



Երիտասարդ գոյգը կ'որակուի անփորձ, եւ փորձառու մեծերը կը փորձեն միջամտել: Ըիշդ է, որ յաճախ առաջնածիններուն կը պակասի փորձառութիւնը, սակայն մեծերը պէտք է ամիթ տան ծնողքին, մայրացած եւ հայրացած գոյգին, ապաւինելու իրենց բնագոյներուն եւ ընթացանութիւններով ձեռք բերած գիտելիքներուն, իւրովի լուծելու ծագած հարցերը, իսկ երբ դժուարութիւններու դէմ ըլլան՝ անոնք կրնան խորհրդակցիլ բժիշկին կամ փորձառու մարդոց հետ: Մեծ մայրերը եւ հարազատները պէտք է նպաստեն, որ երիտասարդ գոյգը իր բնագոյնին եւ ձեռքբերուած իմաստութիւնը օգտագործէ իր գաւկին իսկանքին համար:

Միշտ շնորհակալութեան արժանի եւ ողջունելի է ընկերութեան տածած սերը եւ հետաքրքրութիւնը նորաստեղծ ընտանիքին հանդէպ, սակայն կարելոր է սահմանագիծերու ճանաչումը, եւ յարգանքը «անփորձ երիտասարդ գոյգերու» նկատմամբ, որպէսզի անոնք կարենան ուրոյն որոշումներ առնել եւ ինքնավստահ դառնալ: Միայն այդ ձեւով է, որ ընտանիքը կը դառնայ առողջ ու կենսունակ:



Նորածինը կը մեծնայ եւ շրջապատող կը շարունակէ իր սերը արտայայտել, փոքրիկը պահել իր ուշադրութեան կեդրոնին մէջ՝ իւրովի, իւրաքանչիւրը իր ձեւով, յաճախ անտեսելով ծնողներու որդեգրած ուղեգիծը եւ նախընտրութիւնները: Դրացին կու գայ այցի, խանութէն գնած քաղցրաւենիքով, գետնախնձորի տոպրակներով կամ տուրմով, հորաքոյր-մօրաքոյր, հօրեղբայր-մօրեղբայր նոյն ձեւով կու գան շուկայէն բերուած տարբեր որակի ուտելիքներով սեր արտայայտելու իրենց գարմիկ-գարմուհիին: Աշխատանքային յարաբերութիւններու ընթացքին ցաւով նկատեցի, որ արդէն ետին մնացած են, նորոյթ ըլլալէ դադարած են տուրք պատրաստուած, ինամբով եւ սիրով համեմուած սնունդ տանիլը մեր սիրեցեալ փոքրիկներուն: Ինչո՞ւ: Ժամանակ կը ինայտեք: Մոռցա՞ծ ենք, որ եթէ ժամանակ չունինք տրամադրելու մեր սիրածին, այդ սերը կասկածելի կը թուի: Մենք պիտի կարենանք մեր սուղ ժամանակը տրամադրել եւ մեր սերը արտայայտել՝ միայն մեր սիրով շաղախուած ուտելիքը տանելով փոքրիկներուն: Այսպիսով կը լուծուի նաեւ ծնողներու հետ հակադրուելու հարցը: Որքա՞ն երիտասարդ ծնողներ ըսած են, թէ իրենց փոքրիկները վատ սովորութիւններ ձեռք բերած են այս ձեւով՝ ծանօթացած չիլիսին, շաքարին, ծամոնին եւ այլն:

Որքան փոքրիկի այցելել է ամառ, կարելոր է հարցնել ծնողքին իր նախընտրութիւններուն մասին եւ յարգել սահմանափակումները, այդ ձեւով կը նպաստենք յարգանքի ու սիրոյ մթնոլորտի պահպանման եւ միաժամանակ կը նպաստենք փոքրիկին առողջութեան: Մեծերուն պարտքն է սորվեցնել փոքրիկներուն մտադրար ուտելիք ուտել, ժամանակին քնանալ, որուն համար ալ փոքրիկներուն այցելութիւնները կազմակերպել միայն ծնողքէն իմանալով փոքրիկին քնանալու ժամը: Ուշ ժամերու այցելութիւնները կը խանգարեն մանուկներուն քունը:



Որքան փոքրիկի այցելել է ամառ, կարելոր է հարցնել ծնողքին իր նախընտրութիւններուն մասին եւ յարգել սահմանափակումները, այդ ձեւով կը նպաստենք յարգանքի ու սիրոյ մթնոլորտի պահպանման եւ միաժամանակ կը նպաստենք փոքրիկին առողջութեան: Մեծերուն պարտքն է սորվեցնել փոքրիկներուն մտադրար ուտելիք ուտել, ժամանակին քնանալ, որուն համար ալ փոքրիկներուն այցելութիւնները կազմակերպել միայն ծնողքէն իմանալով փոքրիկին քնանալու ժամը: Ուշ ժամերու այցելութիւնները կը խանգարեն մանուկներուն քունը:

Մարզական



Ռաֆֆի Միլսհեան

ՀԱՅԿԱԿԱՆ

ԳԱԳԻԿ ԾԱՌՈՒԿԵԱՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԵՐՈՂՊԿԱՆ ԽԱՂԵՐՈՒՄ ՄԵԿՆՈՂ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ

ՀԱՕԿ նախագահ Գագիկ Ծառուկեան ընդունեց Միլսքի մեջ տեղի ունենալիք երրորդական երկրորդ խաղերուն մեկնող հայ մարզիկները եւ մարզիչները: Գագիկ Ծառուկեան վերջիցեց Պաքուի մեջ նախապես իրականացող երրորդական առաջին խաղերուն Հայաստանի մասնակցութիւնն ու յաջողութիւնները, մարզիկներուն մաղթելով նորանոր նուաճումներ: Յիշեցնենք, որ 21-30 Յունիսին Պելառուսիոյ մայրաքաղաք Միլսքի մեջ տեղի ունենալիք առաջնութեան, Հայաստան կը ներկայացնեն 37 մարզիկներ: Մարզիկները մաս պիտի կազմեն հետեւեալ մարզածներուն՝ ըմբշամարտ, մարմնամարզութիւն, բռնցքամարտ, հրաձգութիւն, ժիւստ, պատմիւթոն, հեծանիւ, սամպո եւ թիավարութիւն:



Սոյն մարզախաղերուն Հայաստան պիտի ներկայացնեն հետեւեալ մարզիկները:
Ազատ ոճի ըմբշամարտ՝ Գարիկ Բարսեղեան 57 քկ., Վալոտյա Ֆրանգուլեան 65 քկ., Սարգիս Յովսէփեան 97 քկ., Անդրանիկ Գալստեան 125 քկ., յունահռոմեական ոճի ըմբշամարտ՝ Արմէն Մելիքեան 60 քկ., Կարէն Ասլանեան 67 քկ., Կարապետ Չալեան 77 քկ., Մաքսիմ Մանուկեան 87 քկ., Արթուր Ալեքսանեան 97 քկ.:

Մարմնամարզութիւն՝ Վահագն Դաւթեան օղակներ, Արթուր Թովմասեան օղակներ, Արթուր Դաւթեան բազմամարտ:

Պատմիւթոն՝ Լիլիթ Պօղոսեան:

Հրաձգութիւն՝ Հրաչիկ Բաբայեան 10 մ. օդամղիչ հրացան, 50 մ. հրացան, Ալլա Պօղոսեան 10 մ. օդամղիչ հրացան:

Ժիւստ՝ Ֆերտինանդ Կարապետեան 73 քկ.:

Հեծանիւ՝ Էսկար Ստեփանեան:

Սամբո՝ Ասիա Լալազարեան 48 քկ., Տիգրան Կիրակոսեան 52 քկ., Մաքսիմ Մանուկեան 57 քկ., Արսէն Ղազարեան 74 քկ., Դաւիթ Գրիգորեան 82 քկ., Գրիգոր Սահակեան 90 քկ.:

Թիավարութիւն՝ Արա Վիրապեան, Դաւիթ Մարապեան, Վլատիմիր Ալաւերտեան:

Բռնցքամարտ՝ Անուշ Գրիգորեան 51 քկ., Արթուր Յովհաննեսեան 49 քկ., Բարեղամ Յարութիւնեան 52 քկ., Ժիրայր Սարգսեան 56 քկ., Կարէն Տօնականեան 60 քկ., Յովհաննէս Բաչկով 64 քկ., Գուրգէն Մատոյեան 69 քկ., Արման Տարչիւնեան 75 քկ., Գոռ Ներսէսեան 81 քկ., Հենրիկ Սարգսեան 91 քկ., Գուրգէն Յովհաննիսեան 91+ քկ.:

WBA. ԱՐՏՈՍ ԹԱԼԱՔԵԱՆ ԱՇԽԱՐՀԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ ՏԻՐԱՅԱՐ

Ուքրանահայ Արտոմ Թալաքեան երրորդ անգամ ըլլալով կրցաւ պաշտպանել թեթեւագոյն ծանրութեան արհեստավար թռնցքամարտի աշխարհի ախոյեանին կոչումը: Քիեւի մեջ տեղի ունեցած մենամարտին WBA վարկածով աշխարհի ախոյեանի մրցակիցը դարձաւ Թայլանտի ներկայացուցիչ Սարապուտ Տաւորնամը: 31-ամեայ Թալաքեանը յաղթեց 10-րդ *ռաունտ*-ին:



ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ՌԷԱԼ ՄԱՏՐԻՏ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ՊԵԼՃԻՔԱՅԻ ՀԱԶԱՐՏԸ

Սպանիոյ արքայական ակումբ ՌԷԱԼ Մատրիտ, Սանթիակո Պերնապե մարզադաշտին վրայ, աւելի քան յիսուն հազար համակիրի ներկայութի

եամբ, ներկայացուց կազմին նորեկ խաղացող պելճիքացի Իտըն Հազարտը: Հազարտ մամլոյ ասուլիսի ընթացքին ըսաւ, որ իր փափաքն է թագաւորական խումբին հետ տիրանալ բազմաթիւ տիտղոսներու եւ վայելել ախոյեանութեան փառքերը: Ան անդրադառնալով Չէնտտին Չետանի գըլխաւորած խումբին մաս կազմելուն ըսաւ, որ ինք ֆութպոլը սիրած է շնորհիւ Չիտանի: Թագաւորական ակումբի նախագահ Փերեզ, բարի գալուստի խօսք արտասանելէ ետք ըսաւ «Այսուհետեւ Սանթիակո Պերնապե ձեր տունն է եւ դուք այսօրուրէ դարձաք արքայական ակումբին զաւակը»: Աւելցնենք, որ սոյն պայմանագիրը յաջողցնելու համար ՌԷԱԼ Մատրիտ շուրջ 110 միլիոն եւրօ տրամադրեց:



Իտըն Սանթիակո Պերնապե ձեր տունն է եւ դուք այսօրուրէ դարձաք արքայական ակումբին զաւակը: Աւելցնենք, որ սոյն պայմանագիրը յաջողցնելու համար ՌԷԱԼ Մատրիտ շուրջ 110 միլիոն եւրօ տրամադրեց:

ԹՕԹԻ ՀԵՌԱՅԱՒ ՌՈՍԱՅԵՆ

Ըստ իտալական Football Italia-ին, 42-ամեայ իտալացի նշանաւոր խաղացող Ֆրանչիսքօ Թօթին պիտի հեռանայ իր ակումբէն: Աղբիւրին համաձայն, իտալացի մարզիկը հարցերու մեջ է ակումբի ղեկավարներուն հետ եւ այդ պատճառով պիտի լքէ այն ակումբը, որուն տարագը կրած է երկար տարիներ: Յիշենք, որ «Ռոմա»-ի աւագին առաջարկած են զբաղեցնել խումբի մարզական տնօրէնի պաշտօնը, սակայն Թօթի մերժած է: Թօթի իր երկարամեայ մարզական կեանքին ընթացքին հանդէս եկած է միայն «Ռոմա»-ի կազմին հետ: 1992-էն 2017 աւ մաս կազմած է 619 մրցումներու՝ նշանակելով 250 կոլ:



ԻՎԵՆԹՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ԻՐ ՆՈՐ ՄԱՐԶԻՉԸ

Իտալիոյ տարիներու ախոյեան Իվէնթուս իր պաշտօնական կայքին միջոցով յայտարարեց Մաուրիցիօ Սարիի նշանակումը գլխաւոր մարզիչի պաշտօնին: 60-ամեայ մասնագէտին հետ պայմանագիրը նախատեսուած է մինչեւ 30 Յունիս 2022: Սարիի փոխարինեց Մասիմիլիանօ Ալեկրիին, որ 2014-2019 թուականներուն եղաւ Իվէնթուսի գլխաւոր մարզիչը: Աւելցնենք, որ մրցումներու վերջին շրջանին, Սարին եղաւ Լոնտոնի Չելսիի գըլխաւոր մարզիչը: Անոր ղեկավարութեամբ, անգլիական ակումբը զբաղեցուց երկրին ախոյեանութեան երրորդ հորիզոնականը, ինչպէս նաեւ տիրացաւ «Իւրոպա-լիկ»-ի ախոյեանութեան: Նախապէս ան մարզած է իտալական Փեսքարա, Սորենթօ, Էմիլիոյ եւ Նապոլի խումբերը:



ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՅ...

Սկիզբ՝ 1 2

պիտի մասնակցին Սուրիոյ վերականգնումի աշխատանքներուն:

«Սա Սուրիոյ մեջ, անոր իմաստուն նախագահին հովանիին ներքեւ հոգեկան եւ ֆիզիքական խաղաղութեամբ ապրող սուրիահայութեան դերն ու առաքելութիւնը կը համարենք նաեւ», շեշտեց սրբազան հայրը:

Իր կարգին, նահանգապետը ողջունելով Առաջնորդ Սրբազան Հօր հովուապետական անդրանիկ այցելութիւնը Լաթաքիա, յայտնեց, որ սուրիահայութիւնը անքակտելի

մէկ մասնիկն է սուրիական ընկերութեան խճանկարին: Այն մասնիկը, որ հաւատարիմ մնալով Սուրիական Հայրենիքին, մասնակից դարձաւ Սուրիոյ պաշտպանութեան, վերականգնումի եւ վերածաղկումի աշխատանքներուն:

Նահանգապետը իր պատրաստակամութիւնը յայտնեց սատար կանգնելու համայնքի տարբեր աշխատանքներուն եւ իր խօսքը եզրափակելով յաջողութիւն մաղթեց սրբազան հօր եւ անոր ընկերակցող պատուիրակութեան:

Հանդիպումին ներկայ էր նաեւ Լաթաքիոյ նահանգի հասարակական կապերու պատասխանատու Անաս Դանամ:

ԵՐԿՈՒՆԵՐԹԻ	ԵՐԵՐԵՐԹԻ	ՉՈՐԵՐԵՐԹԻ	ՀԻՆԱՇԵՐԹԻ	ՈՐԲԱՐԹ	ՇՈՐԱՐԹ	ԿԻՐԱԿԻ
24/6	25/6	26/6	27/6	28/6	29/6	30/6
22° 37°	23° 40°	22° 39°	23° 37°	20° 35°	21° 36°	21° 37°

ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ՀՈՎՈՒԴԵՏԱԿԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ ԼԱԹԱՔԻԱ

Երեքշաբթի, 18 Յունիսը օրինաբար օր մըն էր Լաթաքիոյ հայ համայնքին համար: Հաւատացեալ ժողովուրդը Ս. Աստուածածին եկեղեցւոյ մուտքը հաւաքուած կը սպասէր թեմի Լորդնտիր Առաջնորդին՝ գօտեպարուելու անոր պատգամով, լիցքաւորուելու բարի մաղթանքներով:



Միջօրեի ժամը 1:00-ին, Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդն ու անոր ընկերակցող պատուիրակուիները ժամանեցին եկեղեցի, ուր դիմաւորուեցան ՀՍԸՄ-ի գայլ-արծուիկներուն ու արի-արեւոյշներուն բարի գալուստի կանչերով եւ հայրենասիրական երգերով, ապա եկեղեցւոյ դրարաց դասուն «Հրաշափառ» շարակալով անոնք մուտք գործեցին եկեղեցի:



Սրբազան հայրը իր անդրանիկ պատգամով Նախ փառք ու գոհութիւն յայտնեց Ամենաբարին Աստուծոյ, որովհետեւ Բերիոյ Հայոց Թեմէն ներս անցնող վեց օրերուն ընթացքին նկատած է, որ սուրիահայ համայնքը Հալէպէն միւս կողմէ Լաթաքիա, Բեսապ, թէ այլուր, համախմբուած է իր ազգային, եկեղեցական, մշակութային եւ ընկերային կառոյցներուն շուրջ, մեր ազգային ու հոգեւոր արժէքներուն շուրջ եւ այդ բոլորին շնորհիւ պահպանած է իր ինքնութիւնը, հաւատարիմ մնալով Եւ Սուրիական Հայրենիքին, Եւ Մայր Հայաստանին:

Ինչ որ Նախագահին՝ տղաք Պաշարալ Ասատին եւ քաջարի բանակին», ըսաւ սրբազան հայրը:

Խօսելով Զրիստոսի պատուիրաններուն հաւատարիմ մնալու մասին, սրբազան հայրը յայտնեց, որ այդ պատուիրաններուն եւ քրիստոնեական արժէքներուն հաւատարիմ մնալով մենք կը վերածուինք մէկ ընտանիքի, մէկ ազգի, մէկ եկեղեցւոյ: Մեր ժողովուրդը Հայաստանի մէջ, թէ Սփիւռքի դարեր շարունակ պահպանած է այդ արժէքները: «Այսօր մենք կ'ապրինք երկրի մը մէջ, որ

Նոյնպիսի արժէքներ կը դաւանի, կը պահպանէ ու կը պայքարի անոնց համար, որպէսզի դէմ դնենք մեր գոյութեան սպառնացող վտանգներուն, մեր դաւանած արժէքներով գոյատեւենք ու ապագային Նայինք վառ ապրումներով: Պատերազմի տարիներուն վկայեցինք, որ շէքեր փոկ կու գան, ապա կը կառուցուին, սակայն ձեր հոգեւոր եւ մարդկային արժէքները կենդանի մնացին ձեր

մէջ: Ուստի լիայոյ՝ ըլլանք, վանե՛նք խաւարը եւ յոյսով Նայինք ապագային: Սուրիահայրութիւնը պատերազմը դիմագրուեց քաջութեամբ, համբերութեամբ: Ուստի հերոս էք դուք, որովհետեւ յաղթեցիք մահուան եւ համբերութեամբ ու գոհողութեամբ ընտրեցիք յաղթանակի ու կեանքի ճանապարհը»:

Անդրանիկ պատգամի աւարտէն ետք, ներկաները միասնաբար երգեցին «Կիլիկիա» մաղթերգը, ապա տեղի ունեցաւ աջահամբոյր: Այնուհետեւ Սրբազան հայրն ու պատուիրակութեան անդամները «Գանձասար» սրահէն ներս հանդիպում ունեցան Լաթաքիոյ ազգային մարմիններուն եւ միութիւններուն ներկայացուցիչներուն, ինչպէս նաեւ Ղընեմիէի, Բեսապի, Արամոյի, Թարթուսի թաղական խորհուրդներուն ներկայացուցիչներուն հետ:

Թղթակից

ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ՀՈՎՈՒԴԵՏԱԿԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ ԲԵՍԱՊ

Լաթաքիա կատարած այցելութենէն ետք, Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդին հովուապետական յաջորդ այցելութիւնը Բեսապ էր:



Բեսապի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մուտքին, Առաջնորդ Սրբազան Հայրը բարի գալուստի ջերմ խօսքերով ու ազգային երաժշտութեամբ դիմաւորուեցաւ ՀՍԸՄ-ի փողերախումբին, արի-արեւոյշներուն, դպրաց դասուն եւ հաւատացեալ ժողովուրդին կողմէ:

Եկեղեցւոյ մէջ, Բեսապի Հոգեւոր Հովիւ Արժ. Տէր Նարեկ Բնյ. Չերենցեան ողջունեց սրբազան հօր գալուստն ու յաջողութիւն մաղթեց Բերիոյ Հայոց Թեմէն ներս անոր առաքելութեան: Ապա անոր Աջը համբուրելով հրաւիրեց զինք անդրանիկ պատգամը ուղղելու քեսապահայութեան:

Գերշ. Տէր Մասիս Եպս. Զօպուեան Նախ փառք տուաւ Ամենակալին, որ առաջին անգամ ըլլալով ոտք կը դնէ Բեսապ, որպէս Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան միաբան:



«Ամբողջ ճամբորդութեանս ընթացքին, մանաւանդ երբ Բեսապին կը մօտենայինք, Աստուծոյ մարդուն շնորհած երեք պարգեւներուն առընչուող մտածումներ եւ գաղափարներ ներշնչեցին զիս: Առաջինը բանակա- նութիւնն է, միտքն է, իմաստութիւնն է: Աստուած մարդը ստեղծեց կատարեալ եւ կատարելութիւնը արտայայտուեցաւ անոր մտքով: Միտքը հետեւաբար սրբութիւն է և նաեւ: Երկրորդը՝ Աստուծոյ մարդուն պարգեւած մարդկային, ֆիզիքական կարողութիւններն են, որպէսզի մարդը անոնցմով կարենայ երկիրը մշակել, ծաղկեցնել: Սուրբ է գործը, այնպէս ինչպէս սուրբ է միտքը եւ բանակա- նութիւնը: Իսկ Աստուծոյ մարդուն

պարգեւած երրորդ ընծան երկիրն է, հողն է, որ դարձեալ սուրբ է: Աստուած մարդը հրաւիրեց այդ երկիրը, հողը սուրբ պահելու՝ Աստու-

ծոյ պատկերին համաձայն: Այս երեք արժէքներուն մէջ կը տեսնեմ քեսապցիւն, քեսապահայր, որ իր կարգին, մեր ժողովուրդի գաւակներուն պարգեւեց հոգեւորականներ, մտաւորականներ, ուսուցիչներ, որոնք դուրս եկան այս գիւղէն եւ ծառայելով հայրութեան՝ աշխարհին բացուեցան: Անցնող տարիներուն մենք

ականատես դարձանք, թէ ինչպէս քեսապահայր գրկուեցաւ իր հողէն, իր գիւղէն, իր տունէն, սակայն, ահաւասիկ մօտաւորապէս հինգ տարի վերջ, ան վերադարձած ու ծաղկեցնել սկսած է հայրենի իր հողը, տունը եւ տիրութիւն կ'ընէ անոնց», ըսաւ Գերշ. Տէր Մասիս:

Այս առիթով սրբազան հայրը գնահատեց համայնքի հոգեւոր հովիւը, թաղականութիւնը, ազգային մեր բոլոր կառոյցները եւ մեր սիրեցեալ ժողովուրդին գաւակները, վստահեցնելով, որ Սուրիական Հայրենիքը պիտի մնայ մեր բոլորին հայրենիքը, այստեղ պէտք է կառնուած մնանք, պէտք է յուսադրենք նաեւ Սուրիայէն դուրս ապրող սուրիահայերը, հաւանաբար արձակուրդով եւ կամ մնալուն վերադարձով վերահաստատուին Սուրիա եւ մասնակցին անոր վերաշինութեան: Այս առիթով Առաջնորդ Սրբազան Հայրը շնորհակալութիւն յայտնեց հայ կաթողիկէ եւ աւետարանական եկեղեցիներու հոգեւոր հովիւներուն, որոնք մասնակցեցան դիմաւորութեան արարողութեան եւ աղօթք

Թղթակից
Շար.՝ 19 8